

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Միութենական Պետութիւնը Անհամեմատելի՝ Եւրոպական Միութեան Դեմ

Հայաստանի Ազգային ժողովէն ներս քննարկման դրուած է Քրեական օրենսգրքէն ներս լրացումներ կատարելու նախագիծ, որուն հեղինակն է «Հայաստան» խմբակցութիւնը: Այս փոփոխութեանը կ'առաջարկուի 33 տարածքային ամբողջականութիւնը կամ անոր մէկ մասը կասկածի տակ դնելը կամ հրապարակայնօրէն արդարացնելը կամ քարոզելը կը դառնայ քրեական հետապնդելի արարք:

Օրէնսդրական փոփոխութիւնը ներկայացնող պատգամաւոր Արամ Վարդանեան այս առթիւ ըսած է. «Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութենէն հրաժարելու կամ այն սահմանափակելու ուղղուած հրապարակային արտայայտութիւնները եւ կամ զայն քարոզելը՝ պէտք է պատժուի տուգանքով»: Վարդանեանի այս ձեւակերպումին անդրադառնալով մեծամասնութեան ներկայացուցիչները հարց բարձրացուցած են, թէ արդեօ՞ք այս կը տարածուի Ռուսաստանի Բոսնիայի Բիւրքինոյի վրայ, որ վերջերս իր մամլոյ ասուլիսներէն մէկուն ընթացքին խօսած էր Ռուսաստան-Պելառոս Միութենական Պետութեան միանալու նպատակարարութեան մասին: Տասը տարի նախագահի պաշտօնը զբաղեցուցած անձի այս յայտարարութիւնը, Հայաստանի եւ սփիւռքի մէջ արժանազան խիստ քննադատութեան, այդ տեսակէտ նկատելով հրաժարում Հայաստանի ինքնիշխանութենէն:

Վարդանեան պաշտպանելով իր դեկավարի տեսակէտը Միութենական Պետութիւնը նմանցուցած է Եւրոպական Միութեան հետ ու ակնարկուցած. «Ես կարծում եմ՝ ՀՀ բնակիչների ստուար զանգուածը միշտ էլ կը պատկերացնի ինտեգրացիոն պրոցեսներ, ՀՀ անկախութեան երաշխաւորմամբ, Ռուսաստանի Դաշնութեան հետ եւ երբեք ոչ, օրինակ, Թուրքիայի հետ»:

Հայաստանի բնակչութեան քանի տոկոսը համաձայն պիտի գտնուի Միութենական Պետութեան մաս կազմելու գաղափարին հետ դժուար է ըսել, քանի որ առայժմ չկան այդ մասին տուեալներ: Վստահաբար յառաջիկայ հարցախոյզներուն այդ հարցը եւս պիտի տրուի քաղաքացիներուն: Իսկ, Ռուս-պելառոսական միութիւնը Եւրոպական Միութեան նմանցնելը խիստ պարզունակ եւ

### Երեւանը Անթոյլատրելի Կը Համարէ Արցախահայութեան Նկատմամբ Բռնութեան Քաղաքականութիւնը

Ատրպէյճանը միտումնաւոր կերպով կը խաթարէ Լեռնային Ղարաբաղի մէջ կենսական նշանակութիւն ունեցող ենթակառուցուածքներու բնականոն աշխատանքը, ինչ որ ակնյայտօրէն կը յանգեցնէ Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամի ստեղծման, կը յայտարարէ պաշտօնական երեւանը:

«Անթոյլատրելի ենք համարում արցախահայութեան նկատմամբ կանոնաւոր բռնութեան այս աղաղակող քաղաքականութիւնը: Ստեղծուած իրավիճակը հրատապ է դարձնում մարդասիրական ճգնաժամի կանխման նպատակով միջազգային հանրութեան յստակ արձագանգը, ինչպէս նաեւ միջազգային մարդասիրական կառուցների անյապաղ եւ անխոչընդոտ ներգրաւուածութիւնը Լեռնային Ղարաբաղում», ըսուած է Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան յայտարարութեան մէջ:

Շուշի քաղաքի մօտակայքին՝ ատրպէյճանական վերահսկողութեան տակ գտնուող տարածքին մէջ, կրկին խափանուած է Հայաստանէն բնական կազմի մատակարարումը Լեռնային Ղարաբաղ: Յրտաշունչ եղանակային պայմաններու

մէջ Լեռնային Ղարաբաղի շուրջ 120 հազար բնակչութիւնը գրկուած է կենսական անհրաժեշտ կազամատակարարումէն, կը չի շեցնէ արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Արցախի իշխանութիւնները կը վստահեցնեն, որ ունին բաւարար հիմքեր պնդելու, որ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող հատուածին մէջ կազատարին վրայ փական տեղադրուած է: Արցախի նախագահի մամուլի քարտուղար Լուսինէ Աւանեսեան ըսած, որ եթէ փականի տեղադրման վերաբերեալ պայտօյցներու հիմքերը չըլլային, նման յայտարարութիւն չէր տարածուեր:

Առանց փակագիծերը բանալու, Արցախի իշխանութիւնները կը վստահեցնեն, որ Մարտ 8-ի պայթումէն յետոյ ատրպէյճանական կողմը խողովակը նորոգած ատեն զայն բանալու ու փակելու յարմարանք տեղադրած է, եւ արդէն կազապատակարարումը դադրեցնելու համար այլեւս պայթումի կարիք չկար:

Արցախի Արտաքին Գործերու Նախարարութիւնը, իր հերթին, կը յայտարարէ, որ «Ատրպէյճանի պահուածքը մարդասիրական անբեկչութիւն է»:

### Արցախի Հայութեան Իրաւունքները Կը Մնան Սկզբունքային Հարց. Միրզոյեան



Նախարար Արարատ Միրզոյեան

Մարտ 10-ին Երեւանին փոխանցուած ատրպէյճանական առաջարկներուն մէջ մեծ հաշուով անընդունելի ոչինչ կայ, այլ բան, որ այդ հարցերը, այդ առաջարկները ամբողջապէս չեն հասցեագրեր Հայաստան-Ատրպէյճան համապարփակ խաղաղութեան հնարաւոր օրակարգը, եւ մեր պատասխանները եկած են ամբողջացնելու այդ օրակարգը, Ազգային ժողովին մէջ յայտարարեց արտաքին գործերու

### Արսինէ Գալուստեան Նշանակուած է Հայ Ամերիկեան Խորհուրդի Հանրային Կապերու Տնօրէն

Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) կը հաղորդէ որ, Արսինէ Գալուստեան նշանակուած է հանրային կապերու տնօրէն: Ան երկարամեայ փորձառութիւն ունի հաղորդակցութեան մարզէն ներս ու պիտի գայ համակարգելու ՀԱԽ-ի հասարակայնութեան հետ կապերու բոլոր աշխատանքները:

«Մենք շատ ուրախ ենք ողջունելու Արսինէին մեր կազմէն ներս», այս առթիւ յայտարարեց ՀԱԽ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեանը: «Ան մեծ փորձ ունի ոչ միայն Հայութեան առնչուող հարցերու մէջ, այլ եւ լրագրութեան եւ հաղորդակցութեան մէջ եւ իր մասնագիտական ունակութիւնները մեծ առաւելութիւն կու տան մեր կազմակերպութեան»:

Արսինէ Գալուստեան նախապէս եղած է Ամերիկայի Հայկական Համագումարի Ֆլորիտա նահանգի ատենապետ:

«Շնորհակալ եմ հայոց պատմութեան այս կարեւոր ժամանակաշրջանին ՀԱԽ-ի առաքելութիւնը շարունակելու հնարաւորութեան համար», ըսաւ Գալուստեան, ակնարկելով. «Քանի որ ՀԱԽ կ'աշխատի խթանելու ամերիկահայ համայնքի քաղաքացիական իրաւունքները եւ



Արսինէ Գալուստեան

անհամբեր կ'սպասեմ օգնելու Հայ Ամերիկեան Խորհուրդին՝ հասնելու մեր ընդհանուր նպատակներուն՝ պաշտպանելու ամերիկեան համայնքի շահերն ու մտահոգութիւնները ինչպէս պետական կառուցներուն, այնպէս ալ լրատուամիջոցներու մօտ»:

Որպէս հասարակական կազմակերպութիւն ՀԱԽ նուիրուած է աշխատանք ծաւալելու Ամերիկ-

### Ամենէն Ուրախ Երկիրներու Ցանկին Վրայ Հայաստան Կը Գրաւէ 84-րդ Տեղը

Հրապարակուեցաւ աշխարհի ամենէն ուրախ երկիրներու տարեկան ցանկը, որուն համաձայն Հայաստան կը դասուի 84-րդ դիրքի վրայ՝ առաջ անցնելով Ատրպէյճանէն (88-րդ), Վրաստանէն (102-րդ) եւ Թուրքիայէն (106-րդ):

Ցուցակը կազմելու ընթացքին նկատի առնուած են իւրաքանչիւր երկրի համախառն ներքին արտադրութիւնը, փտածութեան մակարդակը, անհատական որոշում կայացնելու իրաւունքը, ընկերային օժանդակութեան ծաւալները, կեանքի տեւողութեան միջիւնը եւ այլ տուեալներ, ինչպէս նաեւ «Կալով» ընկերութեան հարցախոյզերու արդիւնքները:

Նախորդ տարուայ նման Ֆինլանտան կը գտնուի երջանիկ երկիրներու ցանկին գլուխը: Անոր կը յաջորդեն Դանիան (Տանիմարք), Զուիցերիան, Իսլանտան, Հոլանտան, Նորվեգիան եւ Շուէտը:

Ամերիկայի Միացեալ Նահանգները կը գտնուին 19-րդ դիրքի վրայ, իսկ Ռուսաստան՝ 72-րդ:

Աշխարհի 146 երկիրներուն մէջ Աֆղանիստան կը գրաւէ վերջին տեղը:



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ՌԴ-ից Պարենի Ներմուծումը Դանդաղել է, Ուքրանիայից՝ Դադարել. Զակամարտող Երկրների Դերը ՀՀ Պարենային Շուկայում

### ՆԱԵՒ ՄԱՆԱՍԵԱՆ

Ուքրանիայի տարածքում Ռուսաստանի նախաձեռնած ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր Հայաստանեան մետիայում եւ փորձագիտական շրջանակներում պարբերաբար քննարկվում է ՀՀ տնտեսության վրայ դրանց բացասական ազդեցությունները: Իսկ ՌԴ կառավարության կողմից եւ ԱՄՆ երկրներ, այդ թվում նաեւ՝ Հայաստան հացահատիկային մշակաբույսերի արտահանման ժամանակաշրջանի արգելքն ակտիվացրեց ընդհուպ մինչեւ պարենային անվտանգության սպառնալիքի վերաբերեալ կանխատեսումները:

Էքոնոմիկայի նախարար Վահան Քերոբեանը շտապեց փարատել հանրության մտահոգությունը ֆեյսբուքեան գրառմամբ:

«Հայաստանի Հանրապետությունում ներկայումս նուազագույն պարենային զամբիւղում ներառուած ապրանքների մասով կանխատեսուող դեֆիցիտ չկայ: Մենք կապի մէջ ենք ռուսաստանեան մեր գործընկերների հետ եւ նոյնիսկ արտահանման հնարավոր սահմանափակումների վերաբերեալ ՌԴ կառավարության որոշման պարագայում՝ Հայաստանի Հանրապետությանը օգնելու համար աշխատում ենք»:

տուժիւնն ունի բնակչութեան պարենային անվտանգութիւնն ապահովելու բոլոր անհրաժեշտ ռեսուրսները», - գրել էր նախարարը:

«Փաստերի ստուգման հարթակին» ուսումնասիրել է Հայաստանի՝ ՌԴ եւ Ուքրանիայի հետ տնտեսական գործակցութեան տուեալները, առանձնացրել պարենային ապրանքների առևտրաշրջանառութեան ուշագրաւ թուերը:

Էքոնոմիկայի նախարարութիւնից FIP.am-ին յայտնեցին, որ այսօրուայ դրութեամբ, «յայտնի պատճառներով», Ուքրանիայից ներմուծումները դադարել են:

«Ռուսաստանի Դաշնութիւնից ներմուծումները շարունակուած են, սակայն դրանց տեմպերը նոսազել են՝ պայմանաւորուած եղանակային պայմաններով Լարսի անցակետի պարբերաբար փակուելու եւ այդ պատճառով առաջացած՝ բեռնատարների կուտակումներով, ինչպէս նաեւ ՌԴ արտարժոյթի կտրուկ արժեզրկման պատճառով մատակարարների կողմից առաջարկուող գների մասով ցուցաբերուող գզուշաւորութեամբ», - ասուած է նախարարութեան պատասխանում:

Ռուսաստանի Դաշնութիւնը Հայաստանի ամենախոշոր առևտ-

րային գործընկերն է: Հայաստանի վիճակագրական կոմիտէի տուեալների համաձայն, 2021 թուականին ՌԴ-ի եւ Հայաստանի միջեւ առևտրաշրջանառութիւնը կազմել է \$2.630 մլրդ., որը կազմում է ընդհանուր առևտրաշրջանառութեան 31%-ը: Ուքրանիայի հետ ՀՀ առևտրաշրջանառութիւնն անհամեմատ աւելի փոքր ծաւալներ ունի. հաշուետու ժամանակահատուածում այն կազմել է \$168.8 մլն. կամ ընդհանուր առևտրաշրջանառութեան շուրջ 2%-ը:

2021 թուականին Հայաստանի ընդհանուր արտահանումը կազմել է \$3.022 մլրդ., որից ՌԴ-ին է բաժին ընկել \$847.25 մլն-ը, ինչը կազմում է ընդհանուր արտահանման 28%-ը: Հայաստանից Ուքրանիա արտահանուել է \$25.66 մլն-ի ապրանք, որը կազմում է ընդհանուր արտահանման 0.8%-ը:

Նախորդ տարում ՌԴ-ից ներմուծումը կազմել է աւելի քան \$1.782 մլրդ. կամ ընդհանուր ներմուծման 33%-ը, Ուքրանիայից՝ \$143 մլն. կամ մօտ 2.6%-ը:

FIP.am-ին էքոնոմիկայի նախարարութիւնից տրամադրուած տուեալները համաձայն, ՌԴ-ն աւանդաբար ՀՀ պարենային ապրանքների ամենախոշոր մատակարարն է:

րարն է: Մասնաւորապէս՝ 2021-ին Հայաստան ներմուծուած մօտ \$347.1 մլն-ի ագրոպարենային արտադրանքից 41.5%-ը բաժին է ընկնել ՌԴ-ին: Եւ միայն \$59.4 մլն.-ը կամ 7.1%-ը՝ Ուքրանիային:

Նախորդ տարի ՀՀ ներկրուած 270,000 տոննա ցորենից 268,100-ը՝ 98.9%-ը, ներկրուել է ՌԴ-ից դրա մաքսային արժէքը կազմել է \$61.5 մլն.: ՌԴ-ից է եկել ՀՀ ներկրուած 27,200 տոննա բուսական իւղից 25,700-ը՝ \$37.8 մլն. մաքսային արժէքով:

Ռուսաստանից խոշոր եղջերաւոր անասունի մսի ներմուծումը կազմել է 224.2 տոննա կամ ընդհանուր ներմուծման 4.9%-ը, թռչնի միսը՝ 15,900 տոննա կամ ընդհանուրի 41.4%-ը, կաթ եւ կաթնամթերք՝ 2100 տոննա կամ ընդհանուրի 14.1%-ը:

Ուքրանիայից 2021 թուականին ներմուծուել է մօտ \$59.4 մլն.-ի ագրոպարենային արտադրանք, որը կազմում է ընդհանուր ներմուծման 7.1%-ը: Նշուած է, որ պարենային մի շարք ապրանքներ առհասարակ նախորդ տարում չեն ներկրուել, օրինակ՝ ցորեն, բուսական իւղ, խոզի միս եւ ոչխարի ու այծի միս:

Ներմուծուող ապրանքախմբերի շարքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաեւ շաքարը՝ 4600 տոննա՝ \$2.8 մլն. մաքսային արժէքով, հրուշակեղէնն ու շոկոլադը՝ 3700 տոննա՝ \$9.7 մլն. մաքսային արժէքով:

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

## Լաւրովը Զանգահարել է Երեւան եւ Պաքու. Ուշագրաւ Հաղորդագրութիւններ

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ռուսաստանի արտգործնախարարութիւնը յայտնում է, որ Սերգեյ Լաւրովը հեռախօսազրոյց է ունեցել Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարների հետ: Ընդ որում, դատելով ՌԴ ԱԳՆ կազմի հաղորդագրութիւնների ժամանակագրութիւնից, հնարաւոր է ենթադրել, որ նախ եղել է Լաւրովի զանգը Պաքու, իսկ յետոյ՝ Երեւան: Այն, որ տեղի է ունեցել երկու հեռախօսազանգ ժամերի տարբերութեամբ, յուշում է, որ քննարկուել են առարկայական հարցեր: Բայրամովի հետ Լաւրովի հեռախօսազրոյցի մասին հաղորդագրութեան մէջ նշուած է, որ քննարկուել են Փետրուարի 22-ին Քրեմլում ստորագրուած ռուսաստանադաշնակա ղաշնակցային հռչակագրի կէտերի կատարումը: Թէ՛ յատկապէս ինչ կէտի մասին է խօսքը, չի մանրամասնուած: Արդեօ՞ք հարցը վերաբերել է Եւրոպայ հանրակիրների արտահանման համակարգմանը, հնարաւոր է թերեւս միայն ենթադրել: Լաւրով-Բայրամով գրոյցի ընթացքում, ըստ ռուսական կողմի հաղորդագրութեան, քննարկուել է նաեւ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարների եռակողմ յայտարարութիւնների կատարման ընթացքը:

ՌԴ ԱԳՆ հաղորդագրութիւնը յայտնում է նաեւ, որ Լաւրովը Բայրամովի հետ «ճշտել է սլաքները» 3+3 ձեւաչափի խորհրդակցական խմբի աշխատանքի մասով: Ընդ որում, ուշադրութեան է արժանի, որ ատրպէյճանական կողմից տարածուած հաղորդագրութեան մէջ չի յիշատակուած թէ՛ Փետրուարի 22-ի հռչակագրի, թէ՛ 3+3-ի թեման: Սա թոյլ է տալիս եզրակացնել, որ

Պաքուի համար այդ թեմայով խօսակցութիւնը այդքան էլ հաճելի չի եղել եւ հնարաւոր է, որ Մոսկուան յիշեցրել է բաւականին անցանկալի հանգամանքներ եւ անգամ փորձել բանեցնել որոշակի ճնշում:

Հայաստանի արտգործնախարար Միրզոյեանի հետ Լաւրովի հեռախօսազրոյցի վերաբերեալ հաղորդագրութեան մէջ ՌԴ ԱԳՆ-ը մատնանշում է, որ ընդգծուել է եռակողմ յայտարարութիւնների դրոյթների «անշեղ կատարման» կարեւորութիւնը, «ներառեալ դեմարկացիայի եւ դելիմիտացիայի գործընթացի արագ գործարկման, եւ ռեզիդենտ տրանսպորտային ապաշրջափակման նախագծային աշխատանքի մեկնարկի կարեւորութիւնը»: Ռուսական կողմը յայտնում է նաեւ, որ շօշափուել է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի թեման, ինչին ռուսական կողմը յայտնել է աջակցութեան պատրաստակամութիւն: Այստեղ էական է, թէ՛ ի՞նչ համատեքստում է այդ պատրաստակամութիւնը: Արդեօ՞ք Մոսկուան պատրաստ է Երեւանի առաջարկին՝ բանակցութիւն կազմակերպել Մինսկի խմբի եռանախաղաղութեան ձեւաչափով, թէ՛ Ռուսաստանը պատրաստ է աջակցել, բայց իր այդպէս ասած հովանու ներքոյ: Յամենայնդէպս ու-

շաղրութեան է արժանի այն, որ ՌԴ հաղորդագրութեան մէջ նշուած չէ համախաղաղութեան ձեւաչափի մասին, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ Մոսկուան այդուհանդերձ չի շտապում Երեւանի առաջարկին կամ դիմումին արձագանքելու հարցում եւ հնարաւոր է, որ դիտարկում է այդ հանգամանքը ԱՄՆ ու Ֆրանսայի հետ բանակցութեան գործոն:

Հեռախօսազրոյցի մասին հայկական կողմի տարածած հաղորդագրութեան մէջ նշուած է, որ Արարատ Միրզոյեանը «ներկայացրել է հայկական կողմի դիրքորոշումը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններ սկսելու վերաբերեալ, այդ համատեքստում կարեւորուել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համախաղաղութեան դերը»: Միեւնոյն ժամանակ, Երեւանի հաղորդագրութիւնը, ի տարբերութիւն ռուսական կողմի, յայտնում է նաեւ հայ-թուրքական գործընթացի քննարկման մասին, ինչպէս նաեւ այլ միջազգային հարցերի: Յատկանշական է, որ Արարատ Միրզոյեանի հետ ՌԴ արտգործնախարարութեան հաղորդագրութեան մէջ չի խօսուած «3+3»-ի ձեւաչափի քննարկման մասին էլ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
daily news updates



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ԼՈՒՐԵՐ

ԱՄՅ-Ը ԵՆ ԿՈՐՈՒԿ ՆՈՒԱԳԵՑՈՒՑԱԾ Է ԶԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՈՒՏԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՆՐ՝ 1.5 ՏՈՒՈՍԻ

Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՅ) եւս կորուկ նուագեցուցած է Հայաստանի տնտեսական աճի կանխատեսումը՝ նախկին 4.5-5 տոկոսի փոխարէն 1.5 տոկոս:

Միջազգային մեծ ֆինանսական կառույցը կ'ընդգծէ, որ Ռուսաստանի նկատմամբ լայն պատժամիջոցները անխուսափելիորէն պիտի ազդեն Հայաստանի տնտեսութեան վրայ, բացասական ազդեցութեան չափը տակաւին անորոշ է:

Արժույթի Միջազգային Հիմնադրամին գնահատմամբ՝ ռուսուքրանական պատերազմին պատճառով սննդամթերքի ու վառելիքի վերաֆինանսավորման տոկոսադրոյքը՝ զայն սահմանելով 9.25 տոկոս: Վերաֆինանսավորման տոկոսադրոյքի այսպիսի խստացումները, ըստ կեդրոնական Դրամատան, պիտի նպաստեն 12-ամսեայ գնաճի նուագման, այն պիտի մօտենայ թիրախային 4 տոկոս ցուցանիշին: Փետրուարին 12-ամսեայ գնաճը 6.5 տոկոս կազմած է, ամբողջ 2021 թուականին՝ 7.7 տոկոս: Այժմ յատկապէս արագ կը բարձրանան սննդամթերքի գները:

2021-ի աւարտին, մինչ ռուսուքրանական հակամարտութեան գործուն փուլը, Հայաստանի իշխանութիւնները 2022-ի համար 7 տոկոս տնտեսական աճ կը կանխատեսէին, այս ցուցանիշը ամբողջութեամբ կառավարութեան հնգամեայ ծրագրին մէջ: Ըստ իշխանութիւններուն, տարեկան նուագագոյնը 7 տոկոս տնտեսական աճ պէտք է թիրախային շարք մը ընկերային խնդիրներ լուծելու եւ մարդոց կեանքը բարելաւելու համար:

«Տեսնում ենք, որ կան որոշակի խնդիրներ հանքարդիւնաբերութիւնում, մշակուող արդիւնաբերութիւնում, արդիւնաբերութեան ճիւղի 94.7 տոկոս աճ է դրուած, որոշակի նուագում կայ նաեւ շինարարութեան ճիւղում: Միակը, որը որոշակի աւելի դրական զարգացում է ունենալու՝ մեր նախկին կանխատեսումների համաձայն, գիւղատնտեսութեան ճիւղն է», ըսած էր կեդրոնական Դրամատան նախագահը:

Անցեալ շաբաթ կեդրոնական Դրամատունը որոշեց 1.25 տոկոսով բարձրացնել գնաճը զսպող գործիքը՝ վերաֆինանսավորման տոկոսադրոյքը՝ զայն սահմանելով 9.25 տոկոս: Վերաֆինանսավորման տոկոսադրոյքի այսպիսի խստացումները, ըստ կեդրոնական Դրամատան, պիտի նպաստեն 12-ամսեայ գնաճի նուագման, այն պիտի մօտենայ թիրախային 4 տոկոս ցուցանիշին: Փետրուարին 12-ամսեայ գնաճը 6.5 տոկոս կազմած է, ամբողջ 2021 թուականին՝ 7.7 տոկոս: Այժմ յատկապէս արագ կը բարձրանան սննդամթերքի գները:

2021-ի աւարտին, մինչ ռուսուքրանական հակամարտութեան գործուն փուլը, Հայաստանի իշխանութիւնները 2022-ի համար 7 տոկոս տնտեսական աճ կը կանխատեսէին, այս ցուցանիշը ամբողջութեամբ կառավարութեան հնգամեայ ծրագրին մէջ: Ըստ իշխանութիւններուն, տարեկան նուագագոյնը 7 տոկոս տնտեսական աճ պէտք է թիրախային շարք մը ընկերային խնդիրներ լուծելու եւ մարդոց կեանքը բարելաւելու համար:

ԴՈՒՔ «ՊԱՅՐԱՔՔԱՐԻ» ԴԵՍԱԿԱՆՆԵՐՆ ԷՔ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. ՔՊ ՊԱՏՈՂԱՆՈՒՄ

«Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Վահագն Ալեքսանեան Ազգային ժողովի նիստին «Հայաստան» դաշինքին հետ լեզուակառուի ժամանակ ըսած է.

«2002-ին Ռուսերթ Քոչարեանն, այո՛, համաձայնել է ու առաջարկել է փոխանակել Մեդրին, ՀՀ ինքնիշխան տարածքը: 2010-ին Ռուսերթ Քոչարեանի ներկայիս ու այն ժամանակ դեռ խմբակիցները քուէարկել են մի օրէնքի օգտին, որով ըստ Արթուր Դազիրեանի փառահեղ ձեռնարկման, որը հնչեց Պետախրաւական Յանձնաժողովի նախկին նիստի ժամանակ, եւս խախտել են այս օրէնքով սահմանուած որոշակի դրոյթներ: Ես չեմ խօսում այն մասին, որ տիկին Գրիգորեանն այստեղից խեղաթիւրելով վարչապետի խօսքերը, ասում է, որ նա իբր յայտարարել է, որ Սեւ լճի համար կոխը չենք տալու: Այնինչ նշուել է, որ 30 տոկոսի համար պատերազմ չենք սկսելու: Որովհետեւ այդ պատերազմը մեր պատկերացմամբ ողբերգութիւն է: Իսկ ոմանց համար լաւ վիտէօ մաթերիալ է, որպէսզի նախընտրական քարոզարշաւի տեսահոլովակների ժամանակ «Պայքարաքթար»-ից նկարահանուած տեսարանները ցոյց տան, թէ ոնց են սպանուում մեր զինուորները: Պատերազմը ձեզ համար ընդամէնը սպանութեան վիտէօ արխիւ է, որը կը փորձէք դարձնել քաղաքական շահաբաժին:



Պատգամաւոր Վահագն Ալեքսանեան

Դուք «Պայքարաքթար»-ի դեսպաններն էք Հայաստանում, որովհետեւ ձեր քաղաքական ուժը նախընտրական քարոզարշաւի ժամանակ հայկական հեռուստաընկերութիւններով եթեր է հեռարձակել թուրքական «Պայքարաքթար»-ից նկարահանուած տեսարանները:

Յեղասպանութեան մասին են խօսում, երիտթուրքերի հետ դաշինք կազմած ուժը եկել այստեղ Յեղասպանութեան մասին է խօսում: Երիտթուրքերից մինչեւ «Պայքարաքթար»-ի դեսպան. սա ձեր քաղաքական յետադիժն է, եւ դա դաջուած է մնալու ձեզ վրայ»:

2021-ԻՆ ԶԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԾ ԵՆ 1 ԹՐԻԼԻՈՆ 586 ՄԻԼԻԱՐ ԴՐԱՄ

«2021-ին 750 միլիոն տոլար ծաւալով եւրոպատատմների թողարկումը վկայում է կառավարութեան կողմից իրականացուող հարկապիւտճէտային քաղաքականութեան նկատմամբ բարձր միջազգային վստահութեան մասին», Ազգային ժողովի Ֆինանսավարկային եւ Պիւտճէտային Հարցերու Մշտական Յանձնաժողովի նիստին նշեց ելեւմուտքի նախարար Տիգրան Խաչատրեանը եւ յաւելեց, որ անոր չաջորդած է երեք վարկանիշային միջազգային կազմակերպութիւններու կողմէ վարկունակութեան դրական վարկանիշի շնորհումը:

Նախարարը տեղեկացուց, որ հրապարակուած է «Ֆիթչ» միջազգային վարկային կազմակերպութեան հերթական գեկոյցը, որով հաստատուեցաւ Հայաստանին շնորհուած «B+» կայուն հեռանկարով վարկանիշը. «Յատկապէս այս ժամանակաշրջանում, երբ մաքրոտնտեսական անորոշութիւններն այդքան շատ են, մենք սա գնահատում ենք որպէս գնահատական կառավարութեան կողմից շարունակուող յուսալի վարկապիւտճէտային մաքրոտնտեսական քաղա-



Ելեւմուտքի նախարար Տիգրան Խաչատրեան

քականութեան»:  
Ինչ կը վերաբերի հարկային վարչարարութեան ու քաղաքականութեան, նախարարը տեղեկացուց, որ 2021 թուականը աւարտած է 1 թրիլիոն 586 միլիարդ դրամ (շուրջ 3 միլիարդ տոլար) փաստացի հարկային եկամուտներով, որ ՀՆԱ-ի նկատմամբ 22.7 տոկոս է:

Ազգային ժողովը Արցախի Մարդասիրական Իրավիճակի Զարցով Չընդունեց Ընդդիմութեան Նախագիծը

ՀՀ Ազգային ժողովը չընդունեց «Արցախի Հանրապետութիւնում ստեղծուած մարդասիրական իրավիճակը, սպառնալիքները եւ հրատապ անելիքները» հասարակական հետաքրքրութիւն ներկայացնող թեմայով ընդդիմութեան ներկայացուցած յայտարարութեան նախագիծը: Յայտարարութեան նախագիծը քուէարկութեան դրուեցաւ Ազգային ժողովի փակ նիստին յետոյ, որուն ընդդիմութեան առաջարկով կը մասնակցէին նաեւ փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը եւ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Փակ նիստին յետոյ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան ղեկավար Հայկ Կոնճորեան յայտնեց, որ նախագիծը քննարկած են խմբակցութեան մէջ: «Մեծամասնութեամբ կիսում ենք այն դիրքորոշումները, որոնք արտայայտուած են այստեղ: Թէ՛ Հայաստանի վարչապետի, թէ՛ Արտաքին Գործոց Նախարարութեան եւ կառավարութեան բոլոր կազմակերպատան ստանալու օղակների, թէ՛ խորհրդարանական դիւանագիտութեան մեզ հասանելի գործիքակազմով մենք ամէնօրեայ կարգով հասցեագրում եւ զբաղում ենք այն բոլոր հարցերով, որոնք դուք ներ-

կայացրել էք՝ մարդասիրական հարցերով, ռազմագերիների վերադարձի հարցով, կազմատակարարման հարցով: Բոլոր օղակներում, նաեւ միջազգային կառույցներում մենք օգտագործում ենք բոլոր դիւանագիտական գործիքները մէջ գտնուող գործիքները, որպէսզի բոլոր այդ հարցերը լուծենք», ըսաւ Կոնճորեան:

Այն յոյս յայտնեց, որ ընդդիմութիւնը կը վերադառնայ խորհրդարանական դիւանագիտութեան դաշտ, յիշեցնելով որ ժամանակին ընդդիմութիւնը պոյքթիւն էր միջխորհրդարանական պատուիրակութիւններու կազմին մէջ մասնակցելը եւ այդ հարցերը աշխարհի մէջ բարձրացնելը:

«Ելնելով այն հանգամանքից, որ մենք օգտագործում ենք դիւանագիտութեան բոլոր խողովակներն ու գործիքակազմերը՝ այս պահին հասցեագրելու այս խնդիրները, ապա գտնում ենք, որ այս պահին բաւարար են այս գործիքները՝ այս հարցով զբաղուելու համար», նշեց ՔՊ խմբակցութեան ղեկավարը՝ նշելով, որ ՔՊ-ն պիտի չմասնակցի այդ հարցի քննարկման:

Քուէարկութեամբ յայտարարութեան նախագիծը ստացաւ 30 կողմ, 0 դէմ եւ 0 ձեռնպահ ձայներ:

Պաշտպանութեան Նախարարը Այցելած Է ՍԻՆԻՔ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան աշխատանքային այցով եղած է Սիւնիքի մարզ: Զօրամասերէն մէկուն մէջ սպաներու հետ հանդիպման ընթացքին նախարարը անդրադարձած է անցնող օրերուն զօրամիաւորման ենթակալ զօրամասերուն մէջ արձանագրուած միջադէպերուն: Սուրէն Պապիկեան ընդգծած է, որ տեղի ունեցածը որոշ ստորաբաժանումներու մէջ կարգապահութեան, ինչպէս նաեւ առանձին զինուորներու բարոյահոգեբանական ոչ-պատշաճ մակարդակի հետեւանք է:  
Լսելով միջադէպերու վերաբերեալ պատասխանատու սպաներուն գեկոյցները, պաշտպանական գերատեսչութեան ղեկավարը զօրամիաւորման հրամանատարին տուած է ցուցումներ եւ յանձնարարականներ՝ նմանօրինակ դէպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերեալ:



# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանի Նախագահը Ընդունած է Շարք Մը Դեսպաններ



Նախագահ Վահագն Խաչատուրեան ու Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար՝ դեսպան Անտրէա Վիքթորինի

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանն ու Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Անտրէա Վիքթորինը քննարկած են տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցեր:

Անոնք խօսած են տարբեր ոլորտներու մէջ Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ յարաբերութիւններու ընդլայնման եւ փոխգործակցութեան խորացման մասին:

Դեսպան Անտրէա Վիքթորինը շնորհակտարած է Վահագն Խաչատուրեանը՝ նախագահի պաշտօնը ստանձնելու առիթով եւ յաջողու-

թիւններ մղած է:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան հանդիպած է Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի դեսպաններուն հետ:

Լին թրէյսին եւ Վահագն Խաչատուրեանը խօսած են երկու երկիրներուն միջեւ տարբեր ոլորտներու մէջ համագործակցութեան առնչուող հարցերու շուրջ:

Դեսպան Սերկէյ Քոփիրքինի հետ նախագահը քննարկած է հայ-ռուսական յարաբերութիւններու հարուստ օրակարգը:

Յիշեցնենք, որ Վահագն Խաչատուրեանը Հայաստանի նախագահի պաշտօնը ստանձնած է շուրջ մէկ շաբաթ առաջ:

## Արցախի ԱԳՆ-ն Կը Դատապարտէ ՄԱԿ-ի Մասնակցութիւնը՝ Բռնագրաւուած Շուշի Քաղաքին Մէջ Արարողութեան

Արցախի Արտաքին Գործերու Նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է ՄԱԿ-ին Ատրպէյճանի անդամակցութեան 30-ամեակին նուիրուած միջոցառումը Շուշիի մէջ կազմակերպելու կապակցութեամբ:

Արցախի ԱԳՆ-ի յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, նշուած է. «Պաշտօնական Պաքոն, իր ոճին համահունչ, շարունակում է ապակառուցողական քաղաքականութիւնը՝ ուղղուած Արցախի նկատմամբ իր յարձակման հետեւանքների օրինականացմանը՝ փորձելով այդ գործընթացում ներգրաւել եւ օգտագործել նաեւ միջազգային հանրութեանն ու տարբեր կառույցներին: Այդ քաղաքականութեան հերթական դրսեւորում է Միացեալ Ազգերի կազմակերպութեանը Ատրպէյճանի անդամակցութեան 30-ամեակին նուիրուած հանդիսաւոր արարողութեան կազ-

մակերպումը Արցախի բռնագրաւուած Շուշի քաղաքում եւ միջոցառումներ ՄԱԿ-ի ու նրա կառույցների ներկայացուցիչների մասնակցութիւնը:

Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարարութիւնը խստիւ դատապարտում է նման միջոցառման անցկացումը Շուշիում:

ՄԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցութիւնը՝ Ատրպէյճանի յարձակման եւ հայտնացութեան գլխաւոր թիրախներից մէկը հանդիսացող բնակավայրում կազմակերպուող միջոցառումը հակասում է միջազգային այս կազմակերպութեան գործունէութեան հիմնադրույթներին: Սա նաեւ լուրջ հարուած է ՄԱԿ-ի հեղինակութեանը, ինչը բացասական ազդեցութիւն կ'ունենայ կազմակերպութեան աշխատանքների արդիւնաւէտութեան վրայ»:

## Մոսկուա Կ'ողջունէ Խաղաղ Պայմանագրի Հարցով «Երեւանի Եւ Պաքուի Պատրաստականութիւնը»

Պաշտօնական Մոսկուան կ'ողջունէ Պաքուի եւ Երեւանի պատրաստականութիւնը՝ սկսելու խաղաղ պայմանագրի նախապատրաստումը, եւ պատրաստ է օժանդակելու բանակցային գործընթացին, յայտնած է Ռուսաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք կ'ողջունենք Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ պայմանագրի նախապատրաստումը սկսելու՝ Պաքուի եւ Երեւանի պատրաստականութիւնը, եւ կը վերահաստատենք բանակցային գործընթացին ըստ ամենայնի օժանդակելու մեր տրամադրուածութիւնը», ըսած է Զախարովան:

Միաժամանակ, ան ընդգծած է, որ առայժմ կանուխ է խօսիլ խաղաղ պայմանագրի ստորագրման ժամկէտերու մասին:

## Փաշինեան Եւ Փութին Քննարկած Են Լեռնային Ղարաբաղի Շուրջ Իրավիճակը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

Նախագահ Վլատիմիր Փութին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Հայաստանի կառավարութեան փոխանցմամբ՝ երկու երկիրներու ղեկավարները քննարկած են Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակը եւ անդրադարձած են 2020 թուականի Նոյեմբեր 9-ի, 2021 թուականի Յունուար 11-ի եւ Նոյեմբեր 26-ի եռակողմ յայտարարութիւններով ամրագրուած պայմանաւորուածութիւններու կատարման ընթացքին: Նիկոլ Փաշինեան եւ Վլատիմիր Փութին անդրադարձած են նաեւ Հայաստանի կողմէ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահութեան ուղղուած դիմումին, որ կը վերաբերի խաղաղու-

թեան պայմանագրի շուրջ բանակցութիւններու կազմակերպման:

Քրեմլինի հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ կողմերը հաստատած են Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական գործընկերութեան եւ դաշինքի հետագայ ամրապնդման փոխադարձ մտադրութիւնը:

Փաշինեան ու Փութին նաեւ միտքեր փոխանակած են հայ-թրքական երկխօսութեան, տարածաշրջանային վերջին զարգացումներուն, Ուքրանիոյ մէջ ստեղծուած իրավիճակին շուրջ:

Քննարկուած են նաեւ ՀՀ վարչապետին՝ յառաջիկային Ռուսաստան կատարելիք պաշտօնական այցին վերաբերող հարցեր:

## Ատրպէյճանը Որպէս Գերի Կը Պահէ 38 Անձ, Որոնցմէ 3-ը Քաղաքացիական Անձիք

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան յայտնեց, որ Ատրպէյճանը որպէս գերի կը պահէ 38 անձ, որոնցմէ 3-ը քաղաքացիական անձեր են: Միրզոյեան այս մասին յայտնեց Ազգային ժողովի Արտաքին Յարաբերութիւններու Մշտական Յանձնաժողովի նիստի ընթացքին:

«Ատրպէյճանում դեռեւս ապօրինաբար պահոււմ են հայ ռազմագերիներ եւ քաղաքացիական անձինք: Եւ Հայաստանը շարունակում է միջազգային տարբեր ձեւաչափերով բարձրաձայնել Ատրպէյճանում պահուող հայ ռազմագերիների, պատանդների եւ այլ պահուող անձանց անյապող վերադարձի հարցը: Ատրպէյճանը դեռեւս պահում է 38 անձի՝ ռազմագերի, պատանդ եւ այլ կարգավիճակով պահուող անձինք: 38-ից 3-ը քաղաքացիական անձինք են: Ուշագրաւ է, որ 38-ից 2-ը գերեզմաններ են նախքան Նոյեմբերի 16-ը տեղի ունեցած մազլցողական քայլը», ըսաւ Միրզոյեան:

Խնդիրը 2021-ի Ապրիլ 19-ին ներառուած է ԵՆԽՎ ապրիլեան նստաշրջանի օրակարգին մէջ, կը շարունակէ ուժի մէջ մնալ նաեւ Ատրպէյճանի մէջ ՄԻԵԴ-ի միջանկեալ միջոցներու կիրառման վերաբերեալ որոշումը:

2021-ի Մայիս 20-ին Եւրոպական Խորհրդարանը 607 անդամներու ձայնով ընդունած է հայ գերիներու անյապող ազատ արձակման եւ վերադարձի կոչ ընող բանաձեւ:

Միրզոյեան յիշեցուց ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի 2021-ի Դեկտեմբեր 7-ի որոշումները: Դատարանը հրատապ միջոցներու կիրառմամբ պարտաւորեցուցած է Ատրպէյճանին կանխել ազգութեամբ հայերը թիրախաւորող ցեղապաշտական ատելութեան եւ խտրականութեան հրահրումը եւ խթանումը, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կանխելու եւ պատժելու վանտալիզմի եւ պղծման գործողութիւնները՝ ուղղուած հայկական մշակութային ժառանգութեան դէմ:

Նախարարը շեշտեց, որ Ատրպէյճանի մշակութի նախարարին բարձրացուցած մտեցումները այն մասին, որ պէտք է ստեղծել յանձնաժողով, որ պէտք է զբաղի «աղուանական մշակութային կոթողներու վերականգնմամբ», հրատապ կը դարձնէ յատկապէս ԵՈՒՆԵՍԿՕ առաքելութեան գործուղումը Լեռնային Ղարաբաղ: Եւ հայկական կողմը այս ուղղութեամբ այժմ բանակցութիւններ կը վարէ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



# Արտասահման Մեկնող Ռուսերը Կը Նախընտրեն Թուրքիան Եւ Հայաստանը



Ռուսաստանն ժամանածներ կը շրջագային Երեւան փողոցներուն վրայ

Մոսկուայէն արտասահման մեկնելու համար ամրագրած տոմսերը կը վկայեն, որ Հայաստանը ռուսաստանցիներու նախընտրած երկիրներէն մէկն է: Մարտի կէսերուն մէկ ուղղութեամբ Մոսկուայէն դուրս մեկնելու համար դէպի Թուրքիա ամրագրուած է ընդհանուր արժէքով 38,5 հազար ռուպլիի, իսկ դէպի Հայաստան՝ 27,1 հազար ռուպլիի տոմսեր:

Միւս ուղղութիւնները Կեդրոնական Ասիոյ երկիրներն են՝ Ուզբէքստան, Ղրղզստան, Տաճիկստան: Այդ երկիրներ մեկնելու համար ամրագրուած տոմսերը համեմատաբար քիչ են՝ 15 հազարէն մինչեւ 21,5 հազար ռուպլի:

Տուեալները կը վերաբերին Մարտ 10-16-ին տոմսերու որոնման ու ամրագրման, որոնց

թուիչքները նախատեսուած են յառաջիկայ չորս շաբաթներու ընթացքին:

Նշենք, որ պատժամիջոցներու պատճառով Ռուսաստանէն արտասահման մեկնելու հնարաւորութիւնները խիստ սահմանափակուած են: Եւրոմիութիւնը, Բրիտանիան, Գանատան եւ ԱՄՆ-ն փակած են իրենց օդային տարածքը ռուսական օդանաւերու համար: Փետրուար 26-ին Եւրոմիութեան ընդունած պատժամիջոցները լիզինկային ընկերութիւններուն պարտադրած են խզել պայմանագրերը ռուսական ընկերութիւններուն հետ եւ ետ կանչել լիզինկով անոնց տրամադրած օդանաւերը:

Ռուսական օդանաւերը ստիպուած թռիչքներ կը կատարեն իրենց համար բաց երկիրներ:

## Հայաստանի Սահմանը Հատած Է Ուքրանիոյ Սօտաւորապէս 4000 Քաղաքացի, Գրեթէ Բոլորը Հայեր Են

Փետրուար 24-ին ռուս-ուքրանական պատերազմը սկսելէն յետոյ, տասնեակ հազարաւոր մարդիկ Ռուսաստանէն, Ուքրանիայէն, Պելառուսիայէն փախստականի, ներգաղթեալի կամ զբօսաշրջիկի կարգավիճակով ժամանած են Հայաստան: Հայաստանի մէջ Ուքրանիոյ դեսպանատան տուեալներով՝ վերջին երեք շաբթուայ ընթացքին ՀՀ սահմանը հատած է Ուքրանիոյ մօտաւորապէս 4 հազար քաղաքացի՝ հիմնականին մէջ ազգութեամբ հայեր: Այդ մասին դեսպանատան հրաւիրած ասուլիսին ընթացքին լրագրողներուն յայտնեց Հայաստանի մէջ Ուքրանիոյ գործերու ժամանակաւոր հաւատարմատար Տենիս Աւթոնովը:

«Առանձնապատկեր իւրեր կան, որ անոնք գրեթէ բոլորը ազգութեամբ հայեր են, ունին այստեղ ընկերներ, հարազատներ, տուն, այդ իսկ պատճառով չեն դիմեր օգնութեան համար», նշեց ժամանակաւոր հաւատարմատարը:

Ըստ Աւթոնովի՝ ուքրանական դեսպանութիւնը որոշ հնարա-



ւորութիւններ ունի մարդիկը «տեղաւորելու», անոնց բնակեցման հարցը լուծելու համար, բայց զբաղուածութեան հարցը լուծելը աւելի դժուար է:

Յատկանշական է, որ Հայաստանի բազմաթիւ քաղաքացիներ՝ երեւանցիներ, շրջաններու բնակիչներ, ըստ Ուքրանիոյ դիւանագիտական ներկայացուցիչին, կը դիմեն դեսպանատուն՝ պատրաստակամութիւն յայտնելով օգնելու ուքրանացի փախստականները վերաբնակեցնելու գործին մէջ:

## Արսինէ Գալուստեան Նշանակուած Է

Շարունակուած էջ 1-էն

եան քաղաքական շրջանակներուն, քաղաքականութիւն մշակողներուն, լրատուամիջոցներուն, ուսումնասիրողներուն եւ ակադեմիկոսներուն մօտ անոնց տրամադրելով հայութեան առնչուող նիւթեր եւ

վերլուծութիւններ: ՀԱՆ նաեւ կը ձգտի ամրապնդել ԱՄՆ-Հայաստան եւ ԱՄՆ-Արցախ կապերը, Հայաստանի մէջ կայուն տնտեսական աճի եւ լաւ կառավարման նպաստող ծրագրերու մշակմամբ, միաժամանակ խթանելով համաշխարհային հասարակութեան ար-

# Հայաստանի Եւ Արցախի Մարդու Իրաւունքներու Պաշտպանները Տարածեցին Յայտարարութիւն

Արցախի հայութեան ցեղային գտման ատրպէճանական քաղաքականութեան համար գտնուած է «մանր վրէժխնդրութեան» գործիք մը: Այս մասին յայտարարութիւն տարածեցին Հայաստանի եւ Արցախի Մարդու Իրաւունքներու պաշտպանները:

«Երէկ երեկոյեան ատրպէճանական կողմը միտումնաւոր կերպով կրկին դադրեցուց Հայաստանէն դէպի Արցախ վառելանիւթ մատակարարող միակ խողովակին աշխատանքները: Մարտ 8-ին, դէպի Արցախ վառելանիւթի մատակարարումը առաջին անգամ ըլլալով դադրեցաւ՝ վթարի անուան տակ, եւ ատրպէճանական կողմը այդպէս ալ չարտօնեց Արցախի մասնագէտներուն, որ մօտենան «վթարի» վայրին, որ կը իրենց վերահսկողութեան տակ գտնուող տարածքին մէջ է: Այդ պահէն սկսեալ պարզ էր, որ Արցախի հայութեան նկատմամբ Ատրպէճանի պետական ատելութեան քաղաքականութիւնը գտած է ճնշման նոր միջոց մը:

Հաւաստի փաստերու համադրումով ակնյայտ կը դառնայ, որ վթարի վերականգնողական աշխատանքներուն ընթացքին, ատրպէճանական կողմը վառելանիւթի խողովակին վրայ տեղադրած է փական մը, զոր որեւէ պահու փակելով՝ կ'ահաբեկէ Արցախի խաղաղ բնակչութիւնը՝ գայն թողնելով առանց ջեռուցման, տաք ջուրի եւ այլ կենսական պայմաններու, յատկապէս՝ նման ցուրտ եղանակային պայմաններուն մէջ: Մարտ 19-ին, վառելանիւթի

մատակարարումը շարունակուեցաւ առաւելագոյնը երեք օր: Սաստիկ ձմեռային այս եղանակին, Արցախի երեխաները, ծերերը, հիւանդներն ու տեղահանուածները զրկուած են ջեռուցումէ: Մարդիկ կը կրեն անասելի դժուարութիւններ: Արցախի մէջ մարդասիրական ճգնաժամը կը շարունակուի:

Մեզի համար կասկած է վեր է, որ ատրպէճանական կողմը միտումնաւոր կերպով կը շարունակէ Արցախի բնակչութեան ճնշման եւ ահաբեկման պետական քաղաքականութիւնը: Նպատակը չէ փոխուած՝ Արցախը ենթարկել ցեղային գտման եւ գայն դատարկել բնիկ հայերէն:

Աւելի քան 100.000 հայ բնակչութեան նկատմամբ այս ամօթալի «վրէժխնդրութիւնը» անընդունելի է: Պետական այս ձեռագիրը լաւագոյնս կը բնորոշէ Ատրպէճանի կողմէ հնչող «հանդուրժողականութեան» թէգերու կեղծ ու սնանկ էութիւնը:

Խստագոյնս կը դատապարտենք ատրպէճանական պետութեան կողմէ Արցախի բնակչութեան նկատմամբ ցեղային ատելութեան ու վրէժխնդրութեան այս գործելակերպը:

Կոչ կ'ուղղենք մարդու իրաւունքներու հարցերով զբաղող միջազգային կազմակերպութիւններուն եւ դերակատարներուն ճնշում բանեցնելու ատրպէճանական կողմին վրայ՝ մարդու իրաւունքներու այս լայնածաւալ ու շարունակական խախտումը վերացնելու համար», - նշուած է յայտարարութեան մէջ:

## Արցախի Հայութեան Իրաւունքները

Շարունակուած էջ 1-էն

նախարար Արարատ Միրզոյեան:

«Առանցքային եւ սկզբունքային ենք համարում Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներն ու ԼՂ կարգավիճակի հարցի հասցէագրումը, ահա այս ամբողջական հենքի վրայ պատրաստ ենք սկսել բանակցութիւններ եւ հէնց այս առաջարկով էլ դիմել ենք ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեանը՝ կազմակերպելու խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններ՝ ՄԱԿ կանոնադրութեան, Քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքների միջազգային դաշնագրի եւ Հելսինքիի եզրափակիչ վճիռի հիման վրայ», պատգամաւորներու հարցերուն պատասխանելով ըսաւ նախարարը՝ եւս մէկ անգամ շեշտելով, որ բանակցութիւնները դեռ չեն սկսած:

«Երբ որ քաղաքական կարգաւորումը կողմերի համար ընդունելի գտնուի, այն պէտք է յանձնուի թղթին եւ ամրագրուի որեւէ պայմանագրով... Մենք որեւէ հակասութիւն չենք դնում տարածքային ամբողջականութեան եւ ինքնորոշման իրաւունքի միջեւ, Հայաստանի եւ Ատրպէճանի միջեւ սահմանազատումը, մեր խորին համոզմամբ, որեւէ կերպ չի վերաբերում Լեռնային Ղարաբաղի հա-

յութեան իրաւունքներին, կարգավիճակին եւ այլն», շեշտեց Միրզոյեան՝ եւս մէկ անգամ յիշեցնելով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը տարածքային չէ, Հայաստանի կողմէ Ատրպէճանի նկատմամբ տարածքային ոտնձգութեան հարց չէ. «Այն բացառապէս եւ ամբողջովին Լեռնային Ղարաբաղի իրաւունքների հարց է»:

«Նաեւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահները եւ համանախագահող երկիրները 2021-ին ընդունել են 11 յայտարարութիւն, որոնցում յստակօրէն արձանագրուել է, որ ԼՂ-ի հիմնախնդիրը դեռեւս լուծուած չէ եւ պէտք է կարգաւորուի կողմերին յայտնի սկզբունքների եւ տարրերի հիման վրայ», յաւելեց արտաքին գործերու նախարարը:

Պաշտօնական Երեւանը անցեալ շաբթուայ սկիզբը յայտարարած էր, որ խաղաղութեան պայմանագրի կնքման բանակցութիւններուն համար դիմած է Մինսքի խմբակի համանախագահութեան: Մինսքի խմբակէն պաշտօնական հրապարակային պատասխան առաջ չէ կալ: Ատրպէյճանը եւս մինչ օրս անարձագանք թողած է խաղաղութեան բանակցութիւնները Մինսքի խմբակի ձեւաչափով անցընելու՝ Հայաստանի առաջարկը:

Ժէքներն ու պարտականութիւնները:

Լրացուցիչ տեղեկութիւններ

րու համար կարելի է այցելել <https://www.armeniancouncil.org/ACA/> կայքը:



# Ժողովրդագրական Իրավիճակի Բարելաւումը՝ Ազգային Անվտանգութեան Խնդիր

## ԱՐՄԵՆՈՒՅԻ ՍԵԼՔՈՆԵԱՆ

Երեխայ ունեցող ընտանիքների բնակարանային ապահովութեան պետական աջակցութեան ծրագրեր կան: Դրանց շրջանակներում դիմումների ընդունման գործընթացը շարունակուում է: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութիւնից տեղեկանում ենք, որ ծրագրերի շրջանակներում 2022 թ. Յունուար-Փետրուարին աջակցութիւն է ստացել 394 շահառու, փոխանցուած ընդհանուր դրամական միջոցները՝ 277 մլն 125 հազար դրամ: 2021 թ. նոյն ժամանակահատուածում շահառուների թիւը եղել է 185, դրամական աջակցութեան չափը կազմել է 131 մլն 673 հազար դրամ: Յիշեցնենք, որ երեխայ ունեցող ընտանիքների բնակարանային ապահովութեան պետական աջակցութեան ծրագրերն ուղղուած են հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերող (բերած) կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացած շահառուներին:

Առաջին ծրագրի շրջանակներում միանուագ դրամական աջակցութիւն է տրուում մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու համար: Իսկ երկրորդ ծրագրով՝ հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերող շահառուին տրամադրուում է դրամական աջակցութիւն, որն ուղղուում է կանխավճարի ապահովագրութեան տարեկան ապահովագրական վճարի մարմանը: Միւս ծրագրով՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքում երեխայ ծնուելու դէպքում ընտանիքին տրուում է միանուագ դրամական աջակցութիւն՝ ուղղուած մայր գումարի մարմանը:

Խօսքը երեք՝ միանուագ դրամական աջակցութեան, կանխավճարի ապահովագրութեան եւ երեխայի ծննդեան աջակցութեան ծրագրերի մասին է, եւ բոլորն էլ պետական ծրագրեր են ու միտուած են ժողովրդագրական իրավիճակի բարելաւմանը:

«Երեխայ ունեցող ընտանիքների բնակարանային ապահովութեան պետական աջակցութեան 2020-2023 թթ. ծրագրերը հաստատելու մասին» կառավարութեան 2020 թ. Մայիսի 14-ի որոշում կայ: Այստեղ նշուում է, որ ընտանիքներին աջակցութիւնը ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով է: Ուսումնասիրութիւնների համաձայն՝ երեխայի պլանաւորման վրայ առաւել մեծ ազդեցութիւն ունեցող խնդիրը բնակարանային է, եւ պետութեան առաջնահերթ միջամտութեան կարիք ունեցող ոլորտն այս առումով հենց այս խնդիրն լուծում տալն է: Բնակարանային ապահովութեան պետական աջակցութեան տարբեր ծրագրեր են եղել եւ կան: Մասնաւորապէս՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան», «Մատչելի բնակարան՝ երիտասարդ զիտանականներին եւ ստեղծագործական միութիւններին անդամներին» (այս ծրագիրն աւարտուել է), «Մատչելի բնակարան երիտասարդ լրագրողներին, բժիշկներին, մանկավարժներին եւ սպորտմեներին» (սա էլ էլ աւարտուել է), «Մատչելի բնակարան երիտասարդ մասնա-

գէտներին», «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովում»:

Նախագահ ձոն Քէնըտիի եւ վարչապետ խրուշչևի խոհական գործելակերպը եւ մօտեցումը լուծելու Գուկայի շուրջ ստեղծուած տագնապը Հոկտեմբեր 1962 թվականին կը փաստէ թէ կարելի է ամէնէն դժուար պայմաններուն մէջ իսկ բանակցիլ, լուծում մը գտնել եւ առաջը առնել վտանգաւոր կացութեան մը որ կրնայ այլապէս աղէտ դառնալ համայն մարդկութեան:

Արդեօք նոյն տրամաբանութենէն մեկնելով կարելի էր Ուրբանիոյ մէջ պատահող ռազմական գործողութեանց առաջը առնել երբ ուշ չէր տակաւին ..... 1991 թվականին:

Արդարեւ, երբ 25 Դեկտեմբեր 1991ին վերջին անգամ ըլլալով Սովետական Միութեան դրօշը վար կ'առնուէր Քրեմլինի պալատին վրայէն, Արեւմուտքը՝ գլխաւորութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու առիթէն կ'օգտուէր եւ գործի կը լծուէր Ատլանտեան Ուխտի (ՆԱՅՕ) անդամակցութիւնը ընդլայնելու եւ իր շարքերէն ներս ընդունելու նախապէս Սովետական Միութեան ուղեծիրին մէջ «արբանեակ» նկատուող երկիրները: Այսպէս Չեխիոյ հանրապետութիւնը, Հունգարիան եւ Լեհաստանը Ատլանտեան Ուխտին անդամ կը դառնային 1999 թվականին : Անոնց կը յաջորդէր երկրորդ խումբ

մը երբ նոյն Ուխտի շարքերէն ներս կ'ընդունուէին Պուլկարիա, էսթոնիա, Լատվիա, Լիթվանիա, Ռուսիան, Սլովակիա եւ Սլովենիա 2004 թվականին: Հետագային անոնց միացան նաեւ Խրուշչևի եւ Ալպանիա 2009 թվականին իսկ Մոնթենեգրո 2017 եւ Հիւսիսային Մակեդոնիա 2020 թվականներուն, ՆԱՅՕՅի անդամ երկիրներու թիւը բարձրացնելով 30-ի:

Ուելքաղաքական մեկնաբանի համար պարզ կը դառնար թէ Արեւմուտքը յիշաւ շրջափակումի կը մատնէր Ռուսիոյ Դաշնութիւնը իր զինուորական ներկայութիւնը տեղադրելով Մոսկուայի քիթին տակ: Արդարեւ, բաւ է դիտել քարտէզի վրայ պարզուող պատկերը այդ եզրակացութեան յանգելու համար: Այսպիսի հետեւութիւն մը արդարեւ բնական կրնայ նկատուիլ բոլոր անոնց համար որոնք ծանօթ են «Պաղ Պատերազմ»ի շրջանին ԱՄՆի նախագահ Հէրբերթ Թրումանի՝ Սովետ Միութեան նկատմամբ կիրարկած «սեղմում»ի (Containment) ռազմավարական քաղաքականութեան տրամադրութիւններուն որոնք իբրեւ պաշտօնական դիրքորոշում գոյատեւեցին մինչեւ Սովետ Միութեան անկումի տարին:

«Ազգային շահերու» գիտակից ուելքաղաքական դէմք չէր կրնար անտարբեր մնալ երկրի արեւմտեան սահմաններու ամբողջ երկայնքին ծաւալող այս նոր իրադրութեան ի տես, այնպէս ինչպէս անցեալին Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնը արդարացիօրէն չէր կրցած հանդուրժել երկրի շահերուն սպառնացող Սովետական ներկայութեան մը՝ հարաւի իր փերուն :

Ատլանտեան Ուխտի հետ Ռուսիոյ յարաբերութիւնները վատթարացան մասնաւորապէս երբ ՆԱՅՕ քննարկելու սկսաւ վրաստանի եւ Ուրբանիոյ անդամակցութեան հարցը ԱՄՆ-ի նախագահ ձոն Քէնըտի որդիի վարչակազմին օրով: Այդ կարելիութիւնը խափանելու եւ անոր հակադարձելու համար Ռուսիոյ Դաշնութիւնը Օգոստոս 2008 թվականին վրաստանի դէմ շղթայազերծեց ռազմական գործողութիւններ, որոնք պէտք է ազդանշան մը համարուէին Արեւմուտքի համար որ Ռուսիա ո'չ մէկ ատեն պատրաստ էր ընդունելու վրաստանի եւ Ուրբանիոյ անդամակցութեան հարցը, այս իրողութիւնը համարելով կարմիր գիծ մը գոր կարելի չէր հատել: Աւելի ուշ Փետրուար 2014 թվականին իրիմի գրաւումը եւ անոր բռնի միացումը Ռուսիոյ ցոյց տուաւ թէ Ռուսիոյ Դաշնութիւնը հակառակ իր տկար միջազգային դիրքին չէր կրնար հանդուրժել այդպիսի ոտնձգութեան մը: Հակառակ ասոր ո'չ ոք կարեւորութիւն ընծայեց Ռուսիոյ Դաշնութեան փոխ Արտաքին Գործոց նախարար Ալեքսանտր Կրուչընոյի Արեւմտեան մամուլի առջեւ ունեցած այն յայտարարութեան որ «վրաստանի եւ Ուրբանիոյ ՆԱՅՕՅի անդամ դառնալը ռազմավարական մեծ սխալ մըն է որ լուրջ հետեւանքներ կրնար ունենալ համա-Եւրոպական խաղաղութեան եւ համա-կեցութեան առումով» : Արդարեւ, Ռուս դիւանագէտներ այս հարցի կապակցութեամբ այս նոյն մտահոգութիւնները եւ մտավախութիւնները բազմիցս յայտնած էին Արեւմուտքի իրենց գործակիցներուն առանց ուելքաղաքական արդիւնքի: Միայն Ռուսիոյ Դաշնութիւնը

չէր որ կը հակառակէր ՆԱՅՕՅի ընդլայնման ծրագիրներուն: Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութեան եւ վարչակազմի բարձրաստիճան անձնաւորութիւններ իրենց լուրջ մտահոգութիւնները արտայայտած էին զանազան առիթներով այս ուղղութեամբ: Անոնցմէ ամէնէն նշանաւորը ձորճ Ֆրոսթ Քէնըն (George Frost Kennan, 1904-2005), որ կը նկատուի Սովետ Միութեան շրջափակումի գաղափարախօսութեան եւ քաղաքականութեան հեղինակը եւ անոր ամէնէն անտեղիտալի ջատագովը, 1998 թվականին Ամերիկեան մամուլի տուած հարցազրոյցի մը ընթացքին կ'ըսէր:

«Կը կարծեմ որ Ռուսերը աստիճանաբար պիտի գայրանան ի տես ընդլայնումի այս քաղաքականութեան ու անոնց ռազմավարութեան ուղղութիւնը պիտի ազդուի այս հարցէն ու անկասկած պիտի հակազդեն: Կը կարծեմ որ մեծ սխալ մըն է ՆԱՅՕՅի ընդլայնելու այս շարժումը որ կրնայ ողբալի հետեւանքներու առաջնորդել: Ո'չ մէկ պատճառ կար այս ընդլայնումին որովհետեւ ո'չ ոք միւսին կը սպառնայ այսօր»:

Միաժամանակ պատմաբան եւ քաղաքագէտ ձոն Մըրջայմեր (JOHN J. MEARSHEIMER) «Արտաքին Յարաբերութիւններ» (FOREIGN AFFAIRS) հեղինակաւոր պարբերաթերթի Սեպտեմբեր-Հոկտեմբեր 2014 թիւին մէջ ծաւալող այս զարգացումին պատմականը կ'ընէր ու տեղ կու տար այս հարցի կապակցութեամբ Ամերիկեան կառավարական շրջանակներէն ներս եղած եւ գոյութիւն ունեցող տարակարծութեանց՝ լուրջ մտահոգութիւններ արտայայտելով հետեւանքներուն մասին: Հետեւաբար, այս հարցի շուրջ եղող տարակարծութիւնները ամբողջովին նորութիւն մը չէին Ատլանտիան Ովկէանոսի գոյգ փերուն:

Հարց է թէ ինչու՞ այսպիսի կարծիք դիրքորոշում մը բռնեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներու իշխող շրջանակները եւ ակամայ անոնց հետեւող Արեւմտեան Եւրոպայի պետութիւնները: Արդարեւ, ի՞նչ մտավախութիւններ է ռազմավարական նկատառումներէ առաջնորդուած անոնք այս տագնապին ծնունդ տուին եւ աւելի սրեցին վրաստանի եւ Ուրբանիոյ կապակցութեամբ իրենց առած քաղաքական եւ տնտեսական բնոյթ ունեցող յետագայ քայլերով: Ի՞նչ վտանգ կը ներկայացնէր Ռուսիոյ Դաշնութիւնը ՆԱՅՕՅի, երբ Ռուսիա տանամեակներէ իվեր բնականոն մասնակցութիւնները մը կը բերէր տնտեսական եւ առեւտրական կապերով իրարու շաղկապուած համաշխարհային նոր համադրութեան եւ կարգուսարքին մէջ , նոյնիսկ եթէ անոր «ազգային շահերը» միշտ չէին համընկնիր իր գործընկերներու շահերուն հետ:

Տարիներու ընթացքին Արեւմուտքի ղեկավարները չուզեցին Ռուսիոյ կացութիւնը եւ այս հարցի կապակցութեամբ անոր ունեցած դիւրագգածութիւնը ըմբռնել եւ անոր համեմատ կարգաւորել իրենց փոխ-յարաբերութիւնները: Դժբախտաբար Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը (ՄԱԿ) իր կարգին չի կրցաւ իր մահաբունը թօթափել եւ երկու կողմերը իրարու մօտեցնել իր հիմնադրութիւնը արդարացնող եւ արժեւորող դաշնագիրի յօդուածներուն ոգիով եւ



# Կրթուած Մուրացկանը («Երեւանեան Պատկերներ» Շարքից)

## ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

...Մի քանի օր էր, ինչ ես եւ Մարիետան տեղաւորուել էինք Երեւանի մեր բնակարանում, երբ սկսեցին մէկը միւսի ետեւից յայտնուել ծանօթ-անծանօթ մարդիկ: Շատեր գալիս են Լոս Անջելէսի իրենց բարեկամներին կողմից ուղարկուած նուէրները եւ դեղերը տանելու: Գալիս են նաեւ արհեստաւորներ, գործ փնտռողներ, հեռու-մօտիկ ծանօթներ, ոմանք էլ, գաղտնիք չէ՝ միանգամայն ընդունելի որոշ ակնկալիքով:

Մենք միշտ Հայաստան ենք գնում, ինչպէս սովորաբար ասում է՝ «գինուած-պատ-րաստուած», որեւէ անանկալ դէպքի համար էլ՝ դարձեալ պատրաստի վիճակում:

Իմ այս ասածը, խնդրում եմ որպէս որպէս բողոքի նշան չընկալել: Մենք դա անում ենք սիրով ու մանաւանդ՝ գիտակցութեամբ:

Եւ ահա, մեր ժամանման երրորդ թէ՛ չորրորդ օրը, մեր պատշգամբի ցանցեպատ դռանն է մօտենում սեւազգեստ, բաւական խնամուած արտաքինով վաթսուներկ մօտ մի կին:

- Խնդրում եմ ձեզ պարոն, մի քանի րոպէ լսել ինձ..., ակնյայտ հոգեպէս ցնցուած վիճակում դրան ետեւից ասում է անծանօթ կինը:

- Ի՞նչ կայ տիկին, ի՞նչ է եղել, ի՞նչ էք ուզում,- մտահոգուած հարցնում եմ:

- Բաց արէք, խնդրում եմ բաց արէք դուռը, ես հիմա ձեզ ամէն ինչ կը պատմեմ:

- Տիկին, ես ձեզ, ինչպէս եւ դուք՝ տեսնում ենք միմեանց ցանցի միջով, ասացէք թէ ինչ էք ուզում:

- Ձե՛ք, չէ՛, բաց արէք, համ էլ վատ եմ զգում, գոնէ մի երկու րոպէ կը նստեմ էս ձեր յարմարաւէտ բալկոնում, կը հանգստանամ, խնդրում եմ:

Բաց եմ անում պատշգամբի մետաղեայ դուռը եւ կինը ինձ գրեթէ հրելով մի կողմ, իրեն գցում է մեր բնակարանից ներս: Ի՞նչ յոգնել, ի՞նչ նստել, կինը անձայն, առանց մի բառ ասելու, պտտում է մեր ընդարձակ հիւրասենեակի մէջ, յետոյ փորձում է անցնել ննջասենեակները, ես անմիջապէս կանխում եմ նրան.

- Վերջապէս կ'ասէ՞ք, թէ ով էք դուք տիկին, եւ ինչ էք փնտռում մեր բնակարանում: Ձեր պահանջներ ինձ բոլորովին դուր չի գալիս:

- Ե՛ս..., ես՝ ոչինչ..., պարզապէս հետաքրքրութեան համար...:

- Կարծեմ, քիչ առաջ դուք ասացիք, որ յոգնած էք եւ ուզում էք նստել, այդ ինչպէ՞ս արագ անցաւ ձեր յոգնածութիւնը տիկին:

- Դէ՛, գիտէք ինչ պարոն...,

այսպիսի բնակարանում յայտնուելու պարագային ի՞նչ յոգնութեան մասին կարող է խօսք լինել: Տեսնում եմ լաւ բնակարան ունէք..., ես..., ես ձեր հարեւան շէնքում եմ ապրում եւ օգնութեան համար եմ եկել ձեզ մօտ:

- Ձեր հագուկապից բնաւ չի երեւում, որ դուք ինչ-որ բանի կարիք ունէք, եւ յետոյ, օգնութեան համար եկողը այդպէս անքաղաքավար ձեւով չի չափաչափ օտարի բնակարանը:

- Կը ներէք պարոն, դուք ճիշդ էք ասում, բայց ես..., ես այնքան շուարած եմ, որ ինքս էլ չգիտեմ, թէ ինչ եմ անում: Ես պարզապէս գլուխս կորցրել եմ..., ա՛խ, ախ, դուք չգիտէք, չգիտէ՞ք..., տղաս հիւանդ է, ծանր հիւանդ, երեկ էլ հիւանդանոց տարան:

Ես մօտաւորապէս գլխի էի ընկել, որ մենք գործ ունենք խաբեբայ, սրիկայ, կրթութեան կնոջ հետ, սակայն ստիպուած եղայ հարցնել.

- Ի՞նչ հիւանդութեամբ է տառապում ձեր տղան,- փոքր ինչ գսպելով գայրոցթա՝ հարցրի նրան:

- Ի՞նչ ասեմ..., ես էլ եմ ամաչում..., այո՛, այո, ամաչում եմ, դէ՛, դէ..., էն անտէր հիւանդութիւնից է էլի..., սեռական բնոյթի:

- Ի՞նչ..., սեռական բնոյթի՞...

- Այո՛, այո..., ես, իհարկէ բոլորին չէ, որ ասում եմ այդ մասին: Դուք դուրի մարդիկ էք, դրա համար էլ ասում եմ, թէ չէ աշխարհով մէկ խայտառակ կը լինենք:

- Իսկ ի՞նչ ինչու ասացիք, չէ՞ որ ես էլ կարող եմ ուրիշներին առջեւ բացել ձեր գաղտնիքը:

- Ո՛չ, ոչ..., դուք դա չէք անի, ձեր ինչի՞նչ է պէտք:

- Իսկ որքա՞ն գումար է անհրաժեշտ ձեր տղային բուժելու համար:

- Ահագին դրամ է հարկաւոր, իսկ ես այդքան դրամ չունեմ: Ինքս երկար տարիներ մանկավարժ եմ եղել, իսկ հիմա չեմ աշխատում, ստացած թոշակս կոմունալ ծախսերին էլ չի բաւարարում: Խնդրում եմ, աղաչում եմ օգնէք ինձ: Ահա երեք օր է դռնէ-դուռ ընկած դրամ եմ հաւաքում տղայիս բուժման համար: Որքան կարող էք, խնդրո՞ւմ եմ, աղաչում եմ:

Այս ամբողջ խօսակցութեան ընթացքին, Մարիետան զարմանքով ու սպասողական հայեացքով ինձ էր նայում, ու, միեւնոյն ժամանակ անհանգիստ շարժումներ անում, փորձելով հասկացնել, որ ինչ որ պիտի անեմ՝ անեմ արագ, այս անսպասելի ու անախտ վիճակից դուրս գալու համար:

Մինչ ես պատրաստուում էի դրամապանակիցս դրամ հանել, այդ կինը աչքերը ֆոռացնում էր

բնակարանով մէկ, իսկ մէկ ուրիշը, նրա փոխարէն աչքերը կը պլշացնէր վրաս՝ նայելու համար թէ որքան դրամ եմ տալու: Արդէն կասկածից վեր էր, որ մենք գործ ունէինք կրթութեան խաբեբայի հետ: Մէկ մտածեցի ոչինչ չտալ այդ սրիկային, մէկ էլ՝ Հենրիկ, ասացի, այդ կնոջ անեծքից ազատուելու համար մի քան դոլար շարտիր, թող ուղ լինի գնայ «հիւանդ» տղայի մօտ:

Ինչեւէ, քսան դոլարանոցը հանցի դրամապանակից ու մեկնեցի կնոջը.

- Խնդրե՞մ տիկին,- կծու, խայթող հայացքս մեխելով կնոջ աչքերի մէջ,- ասացի ես:

Կինը փախցրեց հայեացքը եւ ոչինչ չ'եղածի պէս շարունակեց դիտել մեր հիւրասենեակի պատերին կախուած աւելի, պակաս արժէքաւոր նկարները: Մէկ էլ, աներեւոյթ ուժի ազդեցութեան տակ, զոյգ ձեռքերը բարձրացրեց վեր ու բարձրաձայն ասաց.

- Այս ի՞նչ հիանալի նկարներ են..., օ՛..., Աստուած իմ..., ո՞վ է, օրինակ, այս նկարի հեղինակը, ցուցաւ մտքով մեկնելով Արպան լեռների մի տեսարան պատկերող նկարի վրայ՝ հարցրեց խաբեբայ կինը:

- Տիկին, կարծեմ դուք միտնեցիք մեր բնակարանից ներս առանց թոյլտուութեան, ու հիմա էլ մեր տան իրե՞րն էք ուսումնասիրում..., խնդրեմ հեռացէք տիկին, ինչ որ անբացատրելի վախի զգացումով ասացի նրան:

- Օ՛, ո՛չ, ի՞նչ էք ասում պարոն...եւ...եւ..., հենց այնպէս,- չիմանալով ինչ բացատրութիւն տալ՝ ձեռքերը կրծքին խաչած,- ասաց կինը ու առանց շնորհակալութիւն յայտնելու արագօրէն հեռացաւ մեր տնից:

Նոյն օրը պատմութեանը հաղորդակից դարձրինք մեր բնակարանի «պահապան», առաջին յարկի հարեւան, երիտասարդ մայր Նունէին:

- Այդ ինչ սխալ բան էք արել, ասաց նա,- դա մի խաբեբայ կին է, մեր ամբողջ թաղը ճանաչում է նրան: Այդպէս գեղեցիկ հագնուած, առաքինի կնոջ դէպ խաղաղով, միամիտ մարդկանց հեքիաթներ պատմելով, խղճմտանք առաջացնելով նրանց հոգում, մասնաւորապէս տուրիստների մօտ՝ դրամ է շորթում: Ի՞նչ հեքիաթ էր յօրինել:

- Տղան ինչ որ ծանր հիւանդ է սեռական հոդի վրայ,- ասացի ես:

- Ծանօթ պատմութիւն է,- ասաց Նունէն,- ուրիշ անգամ, որ գայ՝ կը վռնդէք:

...Նոյն տարուայ ձմռանը, Նոր Ծարուայ նախօրեակին՝ հեռաձայն երեւանից.


- Մաեստրօ, ես եմ՝ Նունէն, ձեր բնակարանում գող է մտել..., բայց մի անհանգստանաք, ճիշդ է, ամէն ինչ տակնուվրայ են արել, բայց ոչինչ չեն տարել, բացի ձեր կոնեակներից: Մէկ շիշն էլ առաքե՛ք փառք խմել են, երեք բաժակ կար սեղանի վրայ:

- Է՛..., յետո՛յ, Նունէ,- սա էլ Մարիետան է, որ ձեռքիցս վերցրել էր ընկալուչը:

- Յետո այն Մարիետա Չան, որ մասնագէտ եկաւ, մետաղեայ ձողերը գողեց ու ամէն ինչ տեղն ընկաւ:

- Ինչ ես կարծում Հենրիկ, այս պատմութեան մէջ էն սուտ մուրացկան կնոջ մատը խառն չէ՞...

- «Ի՞նչ իմանաս, մինչեւ հաստատ չիմանաս» ծամծմուած ասոյթով աւարտեցի երկխօսութիւնը:



## DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- o JUVENILE DEFENSE o DOMESTIC VIOLENCE
- o ASSAULT & BATTERY CHARGES
- o DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- o VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- o IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- o ROBBERY AND THEFT OFFENSES
- o ASSAULT WITH A DEADLY WEAPON
- o CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- o CRIMINAL THREATS o WEAPON CHARGES
- o DRUG OFFENSES o SEX CRIMES
- o THEFT CRIMES o GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN  
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

## LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com CALL FOR A FREE CONSULTATION  
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801 626.386.8606

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680



# Փաստինայի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Միջինքի ճաշկերոյթը Ի Նպաստ Արցախի Նահատակներու «Աղօթքի Պարտեզ»ի Շինութեան



Կիրակի, Մարտի 20-ին, 2022 Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին եւ հաւատացեալներու համար պատմական օր մը եւս արձանագրուեցաւ: Արդարեւ, Մեծ Պահքին երրորդ Կիրակին ըլլալով, օրուան պատարագին էր Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան: Հիւրաբար ներկայ էր Արցախի Հայոց նախկին առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան: Սրբազանը՝ «Տնտեսի Կիրակի»ի առիթով հոգեշունչ եւ հայրենաշունչ քարոզով մը իր հայրական պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներուն:

Աւարտին՝ Թաղական Խորհուրդը Մեծ Պահքի ուսեստներով ձոխացուած աւանդական շքեղ ճաշկերոյթ մը կազմակերպուած էր Կիրակոս սրահին մէջ, ներկայութեամբ շուրջ 250 հրաւիրեալներու: Սերմաներու օրհնութիւնը կատարեց օրուան նախագահ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, հանդիսավարութեամբ Տիկ. Սիլվա Քաջիկեանի:


Ներկաները յոտնկայա ունկնդրեցին ԱՄՆ-ի, Հայաստանի եւ Արցախի պետական քայլերգները, եկեղեցւոյ դպրաց դասին կողմէ, մենակատար՝ Ալիսոն Ղաֆարի:

Եկեղեցւոյ 12-ամեայ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան, ողջունի ջերմ խօսքերով հանդէս գալով, գնահատեց ներկաները, յատկապէս նուիրատուներու աջակցութիւնը, որոնց շնորհիւ եկեղեցին գրեթէ պարտքերէ զերծ է: Ան յորդեքեց յարատեւօրէն զօրավիզ կանգիլ մեր ազգային հաստատութիւններուն եւ անոնց հայրենանուէր միջոցառումներուն: Տէր Հայրը անդրադարձաւ նաեւ Արցախի նահատակներուն համար եկեղեցւոյ կից շինուելիք աղօթքի պարտէզի մասին, որ իր տեսակին մէջ առաջինը պիտի ըլլայ սփիւռքի մէջ: Ան կոչ ուղղեց, սրտաբուխ նուէրներով, սատար հանդիսանալ այդ գործի յաջողութեան:

Իր ելոյթին մէջ Պարգեւ սրբազան անդրադարձաւ Արցախի 44 օրուան պատերազմին, Հայրենիքի ազատութեան համար զոհուած քաջամարտիկներուն, որոնք աչօր դասուած են հերոս նահատակներու

շարքին եւ որոնց յիշատակը պիտի յաւերժացուի նաեւ այստեղ, մօտ ապագային, շինուելիք «Աղօթքի Պարտէզ»ով: Արդարեւ, այդ կապակցութեամբ տեղւոյն վրայ կատարուեցաւ հանգանակութիւն: Ներկաներու սրտաբուխ նուիրա-

կիւլիւմեանի: Երգչախումբը ներդաշնակութեամբ մեկնաբանեց «Զարթիր Որդեակ», «Մշեցի մօր երգը», «Գետաշէն», «Հայեր Միացէք» երգերը: Իսկ որպէս վերջաբան ներկաներն ալ յոտնկայա մասնակցութեամբ միացան «Տէր



տուութիւններով գոյացաւ շուրջ 40 հազար տոլար:

Յայտագրի աւարտին գործադրուեցաւ գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը, մասնակցութեամբ եկեղեցւոյ Դպրաց դաս երգչախումբին, դաշնակի ընկերակցութեամբ օր. էլմիրա Սիմոնեանի եւ խմբավարութեամբ Պարթեւ

Կեցո դու գհայս» երգին: Կը շնորհաւորենք սոյն նախաձեռնութիւնը իրագործող յանձնախումբը, տպաւորիչ եւ բարձրամակարդակ միջոցառումին համար: Ներկաները սրահէն բաժնուեցան մեծ բաւարարութեամբ եւ լաւագոյն տպաւորութիւններով: Գ.Ս.

## «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գրիգոր Սաթամեան Թատերախումբի Հիմնադրամ»

Առ ի գիտութիւն Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Սփիւռքի Հայ Համայնքներուն՝ կը փափաքինք տեղեկացնել թէ կազմուած է «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գրիգոր Սաթամեան Թատերախումբի Հիմնադրամ»-ի՝ վարչութիւն մը, Ատենապետութեամբ գաղութիս սիրուած եւ յարգուած բարերարներէն Տիար Նազարէթ Գեւորեանի:

Այս հիմնադրամի հասոյթը պիտի յատկացուի այն հայ ուսանողներուն որոնք կը փափաքին իրենց համալսարանական ուսումով մասնագիտութիւն ստանալ թատրոնի կամ թատերական արուեստին մէջ եւ յետագային ծառայելով հայ մշակուցի տարածման ու փառքավաճման:

Թատրոնը շատ կարեւոր դեր ունի մեր մշակութային կեանքին մէջ, ի մասնաւորի հայապահպանումի առնչութեան: Մեր ազգային պատմութեան մէջ թատրոնը ի գոյ էր Քրիստոսէ առաջ, Հայոց Արտաւազդ Թագաւորի օրով:

Կարելի չէ ուրանալ թատրոնի կարեւորութիւնը, քանզի թատրոնի գոյութեամբ վառ կը պահուի հայ լեզուն եւ մշակուցը որոնք անհրաժեշտ են գաղութիս գոյատեւման այս օտար ափերուն: Կը փափաքինք տեղեկացնել թէ արդէն իսկ եղած են տուրքէ գուրկ նուիրատուութիւններ այն անձերուն կողմէ որոնք կը հաւատան թատրոնի կարեւոր դերին: մեր մշակութային ժառանգի պահպանման համար:

Անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ սոյն հայնապատ ձեռնարկին, թող բարեհաճին զանգահարել ՀԲԸ Միութեան Արեւմտեան Ամերիկայի Փաստինայի գրասենիակը հետեւեալ թիւով, (626) 794-7942 կապ պահելով Տիկզ Ազնիւ Սապունճեանի կամ Պրնզ Հրանդ Վարձպետեանի հետ, Երկուշաբթիէն - Ուրբաթ օրերը ժամը 9-5:

Կանխայայտ շնորհակալութեամբ, Հիմնադրամի վարչութիւն

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիկ. Օմէնի Թաւուգեան-ճրոճր գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի աշխատանքներն ու անոր բովանդակութիւնը \$2000 տոլար կը նուիրէ:

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Պրն. Արա Պապայեան «Մասիս» շաբաթաթերթի բարգաւաճման ֆոնտին կը նուիրէ \$200:




## ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ

Նուիրում  
ՈՍՄԿՄՎԱՐ ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՄԱՅՑՈՒԹԵԱՆ  
Երախտաշատ ղեկավար, կրթական սերնդակերտ գործիչ,  
ՌԱԿ-ի «Զարթօնք» պաշտօնաթերթի ներքուն խմբագիր

## ԳԵՐՄԱՍ ԱՀԱՂՈՆԵԱՆԻ

Մահուան 40-րդ տարելիցին  
Եւ  
Յորելեանական հանդիսութիւն  
ՌԱԿ ԱՄՆ-ի  
Գերսամ Ահարոնեան Ակումբի հիմնադրութեան 40-ամեակին

Տեղի կ'ունենայ Կիրակի, Ապրիլ 3, 2022, երեկոյեան ժամը 5:00-ին  
ԹՄՄ Պէշկոփուրեան կեդրոնին մէջ 1901 N. Allen Ave., Altadena CA 91001  
Գեղարուեստական պատշաճ յայտագիր

Ողբ. Գերսամ Ահարոնեանի նախկին աշակերտները,  
գաղութի ընկեր-ընկերուէիները, ծանօթները սիրով  
հրաւիրուած են այս յուշ երեկոյին, յարգելու համար մեր մեծ  
ղեկավարի յաւերժապետ յիշատակը  
Յորելեանական Յանձնախումբ



### Երեւանը Աշխարհի Հետ Կապուելու Կեդրոն. Ռուսաստանը Հայաստանի Հետ Զբօսաշրջային Համագործակցութիւնը Ընդլայնելու Մեծ Հետաքրքրութիւն Ունի



Մոսկովայի մէջ տեղի ունեցող MTT Moscow ամենամեայ գբօսաշրջային ցուցահանդէսին Հայաստանի տաղաւարը մեծ հետաքրքրութիւն յառաջացուցած է թէ՛ անհատներու, թէ՛ գբօսավարներու եւ պետական կառուցներու շրջանին մէջ: Զբօսաշրջութեան կոմիտէի հանրային կապերու եւ թուային մարքեթինկի փորձագէտ Գայրանէ Այվազեան Մոսկովայի փոխանցեց, որ վերջին օրերուն հանդիպումներու յազմեցած օրակարգ ունեցած են: Հանդիպումներ եղած են Սոչիի, Սան Փեթերպուրկի, Մոսկովայի եւ շարք մը այլ քաղաքներու գբօսաշրջային ոլորտի ներկայացուցիչներու, ռուսական ճամբորդական շարք մը լրատուամիջոցներու հետ:

«Աշխուժութիւնը բաւական մեծ է, հայկական տաղաւարին մօտ շատ մեծ հետաքրքրութիւն կայ թէ՛ անհատներու, թէ՛ ոլորտի ներկայացուցիչներու կողմէ: Մենք շարք մը հանդիպումներ ունեցած ենք ոլորտի ներկայացուցիչներու հետ: Հիմնականին մէջ կը խօսէր հետագայ համագործակցութեան կարեւորութեան մասին յատկապէս այս պարագային (Ռուս-Ռուսաստանի գբօսաշրջութեան կոմիտէի հետ): Համագործակցութիւնը ընդլայնելու մեծ հետաքրքրութիւն կայ Ռուսաստանի կողմէ, անոնք շահագրգռուած են Հայաստանի հետ աւելի արդիւնաւէտ աշխատելու հարցով:

Նոյնիսկ կը խօսուէր առաջարկներու մասին, որ Երեւանը դառնայ որոշակի կեդրոն, ուրկէ հնարաւոր նպիտի ըլլայ կապուել աշխարհին հետ, յատկապէս այն պարագային, որ Ռուսաստանը կը գտնուի պատժամիջոցներու ներքոյ» ըսաւ Գայրանէ Այվազեան: Անոր խօսքով, քննարկումներու ընթացքին ամենաշատ տրուող հարցումները կը վերաբերէին օդանաւային թռիչքներուն: Կարեւորուած է հայ կական օդանաւային ընկերութիւններուն աշխատանքը: Հայկական ընկերութիւնները կը շարունակեն թռիչքները Ռուսաստանի ուղղութեամբ

եւ այս օրերուն կապը չէ կտրուած: Զբօսաշրջութեան կոմիտէի աջակցութեամբ ցուցահանդէսին մէկ միասնական տաղաւարով Հայաստանի գբօսաշրջային ներուժը կը ներկայացնեն 13 գբօսաշրջային ընկերութիւն: «Ճասթօրեւոր» գբօսաշրջային ընկերութեան ներկայացուցիչ Նայիրա Թովմասեան փոխանցեց, որ Հայաստանը ցուցահանդէսին կը ներկայացնէ Հայաստանի գբօսաշրջային հնարաւորութիւններու լայն շրջանակ:

«Այս դժուար իրավիճակին մէջ, որ շատ երկիրներ փակած են այցելութիւններու հնարաւորութիւնները Ռուսաստանի քաղաքացիներուն համար, Հայաստանը այն քիչ վայրերէն է, ուր ռուս գբօսաշրջիկները կրնան այցելել: Հայաստանը ունի բազմապիսի գբօսաշրջային արդիւնք, բազմաթիւ հնարաւորութիւններ կան թէ՛ արկածային, թէ՛ կասթրօ, թէ՛ գինեգործական, թէ՛ մշակութային գբօսաշրջութեան ուղղութիւններով», ըսաւ Նայիրա Թովմասեանը:

Անոր խօսքով՝ Հայաստանը բաւական յարմարաւէտ հարթակ է հաւաքական գբօսաշրջութեան կազմակերպ ման համար, ինչ որ մինչեւ համավարակը մեծ թափ ստացած էր Հայաստանի մէջ: Ան նկատեց, որ այսօր առաւել քան կարեւոր է, որ ռուս գործընկերները իմանան՝ Հայաստանը պատրաստ է համագործակցութիւնը շարունակելու, հակառակ բոլոր դժուարութիւններուն:

«MITT Moscow»-ն Ռուսաստանի եւ ԱՊՀ երկիրներու ամենամեծ գբօսաշրջային ցուցահանդէսն է, որուն Հայաստանը մասնակցած է: Ռուսաստանը Հայաստանի գբօսաշրջային ամենամեծ եւ առաջնային շուկաներէն է:

2021-ին ամենամեծ գբօսաշրջային հոսքերը Ռուսաստանէն էին: Նախորդ տարի Հայաստան ժամանած էր 350.569 ռուսաստանցի գբօսաշրջիկ:

### Գուպայէն ..... Ուքրանիա

Շարունակուած էջ 11-էն

տրամադրութեամբ: ՄԱԿի վարչական կազմը եւ կառուցները պարզապէս անգոր դարձած են «Ապահովութեան Խորհուրդ»ի մշտական հինգ անդամներու եւ հզօր պետութիւններու ի գործ դրած բեմական ճարտասանութեանց դիմաց: Հակադիր տրամադրութիւններու բացայայտումով այդ հզօր տէրութիւնները միջազգային այդ կազմակերպութիւնը որ ի ծնէ կոչուած է տագնապներու բարձր լուծում մը գտնելու, ամուլ գործիքի վերածուած է տասնամեակներէ ի վեր:

Միաժամանակ հարց է նաեւ թէ ինչու՞ այս հարցով Ռուսիոյ Դաշնութիւնը Ուքրանիոյ մէջ դիմեց լայնածաւալ ռազմական գործողութեանց ճիշդ այս օրերուն: ՆԱԹՕ-ն իսկապէս ի՞նչ վտանգ կը ներկայացնէր Ռուսիոյ Դաշնութեան շահերուն, նոյնիսկ եթէ անոր անդամներու թիւը բարձրանար 32-ի վրաստանի եւ Ուքրանիոյ անդամակցութեամբ: Մարդ կը տարուի մտածելու թէ այս պատերազմով Ռուսիոյ Դաշնութիւնը իր արտաքին յարաբերութեանց մարզէն ներս իր ձախողութիւնը փաստեց ցոյց տալով որ անցնող 30 տարիներուն չէ կրցած նախկին արբանեակ երկիրներու մօտ գոյութիւն ունեցող կասկածները, վարանումները եւ անվստահութեան զգացումը փարատել: Եթէ Ռուսիոյ Դաշնութիւնը իրականում հոգ տարած ըլլար այդ երկիրներուն հետ իր յարաբերութիւնները հիմնովին փոխելու մտադրութեան, հաւանաբար այս երկիրներու համար ՆԱԹՕ-ի անդամակցութեան հարցը նուազ քաշողական բնոյթ մը ունենար: Շատ հաւանական է որ այդ երկիրները ստիպուեցան ՆԱԹՕ-ի անդամակցութեան այդ քայլին դիմելու որովհետեւ վստահ չէին թէ իրենց հետ գործ ունեցող այս նոր պետութիւնը կրնար տարբեր ըլլալ անցեալին այլ պիտակաւորում ունեցող դրացիէն:

Պարզ է որ Ուքրանիոյ մէջ պատահած այս աղէտին պատճառները եւ յանցանքը կարելի չէ մէկ կողմին վերագրել միայն:

Միաժամանակ պարզ է որ Ուքրանիան գիտակցելով հանդերձ իր փափուկ կացութեան չի կրցաւ ճկուն ըլլալ իր արտաքին քաղաքականութեան ձեւաւորման մէջ երբ հաւատք ընծայեց Արեւմուտքի հաւաստիացումներուն եւ խոստումներուն հետապնդելով ծրագիր մը որուն գործնական վախճանը իրմէ բնաւ կախում չունէր եւ որ դրացի երկիրն մօտ ժխտական տրամադ-

րութիւններ կամ հակազդեցութիւններ կը ստեղծէր նիւթին ծանօթ անոր դիւրագագացութեան պատճառով:

Այնչափ է որ Ուքրանիան թակարդի մէջ ինկած է:

Այնչափ է նաեւ որ Ռուսիոյ Դաշնութիւնը թակարդի մէջ ինկած է երբ գինուորական ոյժի դիմած է քաղաքական հարց մը լուծելու համար: Պատերազմի գործած աւերներուն պատկերները որոնք աշխարհի չորս դին կը սփռուին սեւ կէտ մը պիտի հանդիսանան իր վարկին համար ու անգամ մը եւս կը փաստեն թէ ինչ ալ ըլլայ այդ երկրի քաղաքական պիտակաւորումը իր ծաւալող պաշտական ծրագիրները եւ մտադրութիւնները նոյն մնացած են դարերէ ի վեր: Սակայն նոյնիսկ եթէ Ռուսիա յաջողի գրաւելու Ուքրանիան, ու կամ կանուխ ստիպուած է հաշտուելու այն գաղափարին եւ իրականութեան հետ որ իր ներկայութիւնը Ուքրանիոյ սահմաններէն ներս ծաւալող ժողովրդային ընդդիմադրութեան մը պիտի հանդիպի: Սովետ Միութիւնը Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք մօտ չիտուն տարիներ նախկին արբանեակ երկիրներու վզին չորքած անոնց ներքին եւ արտաքին յարաբերութիւնները իր ազդեցութեան ենթարկած էր: Ու պատահեցաւ այն ինչ որ անխուսափելի էր երբ Սովետական Միութիւնը ինք փլուզուելու ենթարկուեցաւ քաղաքական, տնտեսական, ընկերային ծանր պայմաններու պատճառով, մինչ այդ երկիրները անկախութեան տիրացան ... կրկին: Հետեւաբար պատմութեան ընթացքին մէջ վաղանցուկ յաղթանակ մը պիտի ըլլայ այս, ինչպիսին եղած են ասկէ առաջ եղած բոլոր գինուորական յաղթանակներու պարագան:

Նոյնքան լուրջ է այն հաւանականութիւնը որ Ռուսիոյ Դաշնութիւնը պիտի չի կարենայ դիմադրել ծախսալից պատերազմի մը պահանջներուն եւ Արեւմուտքի տնտեսական, քաղաքական եւ ֆինանսական պատժամիջոցներու ծանրութեան տակ կքի:

Ի՞նչպէս դուրս գալ այս անելին: Թերեւս ժամանակը եկած է որ նախագահներ Փոլթին եւ Պայտրն իբրեւ գլխաւոր դերակատարները այս ահաւոր ողբերգութեան օրինակ առնեն Քէնեդի-Խրուշչեւ զոյգէն եւ կրկին գործի լծեն «Կարմիր Գիծ» հեռաձայնային կապը՝ Ուքրանիան եւ մարդկութիւնը փրկելու համար վտանգաւոր հետեւանքներ կրող այս տագնապէն:

**ԳՈՐԾԱԴՈՐ ԿՈՒՉՈՒԻ**  
**Փաստփնայի մէջ Անուշավաճառի հաստատութիւնը մը կարիքը ունի աշխատող օրիորդներու եւ տիկիներու**  
**Անգլերէն իմանալը պայման է**  
**Մանրամասնութեան համար հեռաձայնել Տիկ. Անահիտին (818) 266-5838 թիւին:**

**www.massispost.com**  
**Daily News Updates**



ՄԱՅԱԶԴ



ՃՈՐՃ ՄԱՏՈՅԵԱՆ (Ծնեալ Յունիս 11,1952 Հալէպ)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր մեծ հօր՝ Ճորճ Մատոյեանի մահը որ պատահեցաւ Ուրբաթ 11 Մարտ 2022-ին, Լոս Անճելոս, Գալիֆորնիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 31 Մարտ 2022-ին առաւօտեան ժամը 10:00-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Պըրպէնք (3325 N. Glenoaks Blvd, Burbank, CA 91504), որմէ ետք թաղման կարգը պիտի կատարուի (Grand View Memorial Park) գերեզմանատան մէջ (1341 Glenwood Road, Glendale, CA 91201):

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Անահիտ Մատոյեան Զաւակները՝ Տէր եւ Տիկին Արամ Մատոյեան եւ Անի Պէլլիշքով Հայկ Մատոյեան եւ խօսեցեալք Սթեֆանի Օսիբով Քոյրերը՝ Տէր եւ Տիկին Պետրոս եւ Նուարդ Տարաքճեան եւ դուստրերը՝ Մարալ եւ Սալբի Տարաքճեաններ Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Զոյա Օհաննէսեան եւ զաւակները Արամ եւ Լիլիթ Տէր եւ Տիկին Լեւոն եւ Մանուշակ ձիճի եւ զաւակները Նայիրի եւ Վանա

- Եղբայրը Տէր եւ Տիկին Վազգէն եւ Զարուհի Մատոյան Էլիզա եւ Վրէժ ձիճիեան եւ ընտանիք Արամ եւ Եւա Հայրիկեան եւ ընտանիք Անէթ եւ Աբրահամ Քէրեան եւ ընտանիք Ամալիա եւ Անթուան Երամեան եւ ընտանիք Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութիւն եւ համայն Մատոյեան, Տարաքճեան, Օհաննէսեան, ձիճի ընտանիքներ, հարազատներ ու բարեկամներ եւ Կիլիկեան շրջանակի ողջ ընտանիքի անդամներ:

Թաղումէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի L.A.Banquets Legacy Ballroom and Lounge (6410 San Fernando Rd. Glendale, Ca 91201):

Փոխան ծաղիկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Կիլիկեան Բարեգործական Բարեսիրական Հաստատութեան (Guiligian Benevolent Foundation, c\o 1854 Glenwood Road, Glendale, CA 91201:

ՄԱՅԱԶԴ



ՄԱՐԻԱ ՖԱՐԱՀ ԵՈՂՈՒՐԹՃԵԱՆ (Ծնեալ 22 Դեկտեմբեր 1940, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, բրոջ եւ հարազատին՝ ՄԱՐԻԱ ՖԱՐԱՀ ԵՈՂՈՒՐԹՃԵԱՆի մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 2 Մարտ 2022-ին, Լոս Անճելոս, Գալիֆորնիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Զորեքշաբթի, 13 Ապրիլ 2022-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Պըրպէնք (3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504), ապա թաղման կարգը պիտի կատարուի Ֆորեսթ Լոն Հոլիվուտ Հիլզի գերեզմանատան մէջ (Forest Lawn Memorial Park - Hollywood Hills, 6300 Forest Lawn Dr, Los Angeles, CA 90068):

- Սգակիրներ՝ Զաւակները՝ Տէր եւ Տիկին Ճորճ եւ Արփի Ամիրեան եւ դուստրերը՝ Աիտա եւ Լարա Տէր եւ Տիկին Արա եւ Սօսի Եողուրթճեան եւ զաւակները՝ Յարութ եւ Լորի (Պոսթոն) Տէր եւ Տիկին Արմէն եւ Հերմինէ Պաքճեան եւ զաւակները՝ Մարիա, Կարին եւ Արման Արեգ (Մոնթրէալ, Քանատա) Տէր եւ Տիկին Հրաչ եւ Աստղիկ Սեփեթճեան եւ դուստրերը՝ Լորի եւ Փաթիլ

- Եղբայրները՝ Ֆարահ Ֆարահ ընտանիք (Լիբանան) Ժողէֆ Ֆարահ ընտանիք (Լիբանան) Միշէլ Ֆարահ ընտանիք (Լիբանան) Ժոնի Ֆարահ ընտանիք (Լիբանան) Քոյրերը՝ Օլիակե Թանիոս Նմըր ընտանիք (Լիբանան) Լորիս եւ Եուսէֆ Խրէշ ընտանիք (Լիբանան) Ժորժէթ եւ Յովհաննէս Տէմիրճեան եւ ընտանիք (Մոնթրէալ, Քանատա)

- Ֆրումինա եւ Սայիտ Տիապ եւ ընտանիք (Լիբանան) Լորէթ եւ Միշէլ Էլ-Մըր եւ ընտանիք (Լիբանան) Լուսի եւ Մարուն Սատէր եւ ընտանիք (Լիբանան) Ռոզ եւ Միշէլ Սատէր եւ ընտանիք (Լիբանան) Էմըլի եւ Միլէտ Հապպուպ եւ ընտանիք (Լիբանան) եւ համայն Եողուրթճեան, Ֆարահ, Մածունեան, Թելֆճեան, Ամիրեան, ձիլեան, Պաքճեան, Սեփեթճեան ընտանիքներ ու հարազատներ:

\*\*\* Փոխան ծաղիկեպակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Լիբանանի ՀԲԸՄ-ի վարժարաններուն, հետեւեալ կապով՝ [https://donate.agbu.org/lebanon\\_schools\\_educators](https://donate.agbu.org/lebanon_schools_educators) - In memory of Maria Farah Yoghourtjian

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ԶԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER Accident and Health Agent, Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204 Burbank, CA 91502

WE INSURE YOUR FUTURE, SO YOU CAN FOCUS ON THE PRESENT



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479 demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:----- Address:----- City:----- State:----- Zip Code:----- Country:----- Tel:----- Email:-----



# Մարմնամարզիկ Արթուր Դաւթեան Կրկին Ոսկէ Մետալ Նուաճեց Աշխարհի Գաւաթի Մրցումներուն



Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականի անդամները կը շարունակեն բացարձակ անթերի ելուցները աշխարհի գաւաթի մրցաշարքերու ընթացքին:

Եզիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ ընթացող աշխարհի գաւաթի երրորդ հանգրուանին Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր Արթուր Դաւթեան կրկին ոսկէ մետալ նուաճեց: Հենացատկի վարժութեան մէջ Դաւթեան հաւաքեց 14.983 կէտ:


Նախապէս աշխարհի գաւաթի մրցաշարքի հերթական հանգրուանին Հայաստանի խումբի անդամ Վահագն Դաւթեան օղակներու վարժութեան մէջ դարձած էր ոսկէ մետալակիր, իսկ նժոյգ-թափերու վարժութեան մէջ Յարութիւն Մերտինեան նուաճած էր արծաթէ մետալ:

Մինչ այս կատարուած աշխարհի գաւաթի մրցումներուն Հայաստանի հաւաքականէն Արթուր Դաւթեանը նուաճած է երկու ոսկի, մէկ արծաթ, Արթուր Աւետիսեանը՝ մէկ արծաթ, Վահագն Դաւթեան՝ մէկ ոսկի, մէկ արծաթ, Յարութիւն Մերտինեան՝ մէկ պրոնզէ մետալ՝ ընդհանուր երկու ոսկի, երկու արծաթ, մէկ պրոնզ:

Վերջին՝ 4-րդ փուլը տեղի պիտի ունենայ Պաքուի մէջ, որուն Հայաստանը պիտի չի մասնակցի:

# Բռնցքամարտիկ Յովհաննէս Բաչկովի Երրորդ Յաղթանակը

Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններու բազմակի մրցանակակիր բռնցքամարտիկ Յովհաննէս Բաչկով հերթական յաղթանակը տօնեց:



Տուպայի մէջ տեղի ունեցած արհեստավարժ բռնցքամարտի մրցաշարին Յովհաննէս Բաչկովը մենամարտի 8-րդ ռաունտին թեքնիք նոկաուտով յաղթեց 39-ամեայ արժենթինացի Քրիստիան Կորիային:

Յովհաննէս Բաչկովը բռնցքամարտի աշխարհի առաջնութիւններէ երեք անգամ դարձած է պրոնզէ մետալակիր (2017, 2019, 2021), Եւրոպայի առաջնութեան կրկնակի ախոյեան է (2017, 2019), Թոքիոյի 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր է: Իր առաջին մենամարտը արհեստավարժ բռնցքամարտի զծով կատարած է 2020 թուականին:

# «Ռոման» Յաղթեց.

# Մխիթարեան Մասնակցեցաւ Ամբողջ Խաղին

Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 30-րդ հանգրուանի կեդրոնական խաղին կայացաւ հռոմէական տերպին՝ «Ռոմա»-«Լացիօ»:

Հռոմի Ողիմպիական մարզադաշտին վրայ կայացած մրցումին «Ռոման» առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով: Հանդիպման առաջին եւ 32-րդ վայրկեաններուն աչքի ինկաւ Աբրահամը՝ դառնալով երկու կողերու հեղինակ, իսկ 40-րդ վայրկեանին «գայլերու» երրորդ գնդակը նշանակեց Փելեկրինին:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի արդէն իսկ նախկին անդամ Հենրիխ Մխիթարեան «Ռոմա»-ի հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Ռոմա» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ առաջ անցաւ «Լացիոյն» եւ այժմ 5-րդ դիրքի վրայ է:

# «Միլան» Յաղթեց Եւ Ամրապնդուեցաւ Առաջին Տեղը

Իտալիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Միլան» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Կալչարի» հետ եւ յաղթեց 1:0 արդիւնքով: Միակ կողմ 59-րդ վայրկեանին նշանակեց ալճիբիացի կիսապաշտպան Իսմայիլ Պենասերը:

«Միլան» 66 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտով կը գերազանցէ երկրորդ տեղը գտնուող «Նափոլին»:

# Ախոյեաններու Լիկայի Քառորդ Եզրափակիչի Ձոյգերը



Շուէտի Նիոն քաղաքին մէջ տեղի ունեցաւ ֆուտբոլի Ախոյեաններու Լիկայի քառորդ եզրափակիչի զոյգերը:

Ըստ վիճակահանութեան ձեւաւորուած են հետեւեալ զոյգերը՝ «Չելսի» (Անգլիա) - «Ռեալ» (Սպանիա) «Մանչեսթըր Սիթի» (Անգլիա) - «Աթլէթիքօ» (Սպանիա) «Վիլլեաուեալ» (Սպանիա) - «Պալըն Միլնիթի» (Գերմանիա) «Պենֆիքա» (Փորթուգալ) - «Լիւսերփուլ» (Անգլիա) Քառորդ եզրափակիչի առաջին խաղերը տեղի պիտի ունենան Ապրիլ 5-ին եւ 6-ին, իսկ պատասխան հանդիպումները՝ Ապրիլ 12-ին եւ 13-ին:

# Եւրոպայի Լիկայի Վիճակահանութեան Արդիւնքները



Շուէտի Նիոն քաղաքի մէջ տեղի ունեցաւ ֆուտբոլի Եւրոպայի Լիկայի վիճակահանութեան արդիւնքով կը մրցին հետեւեալ զոյգերը

«ՌԲ Լայպցիկ» (Գերմանիա) - «Աթալանթա» (Իտալիա) «Այնտրախտ Ֆրանքֆորտ» (Գերմանիա) - «Պարսելոնա» (Սպանիա) «Ռեալ Յեմ» (Անգլիա) - «Լիոն» (Ֆրանսա) «Փրակա» (Փորտուգալ) - «Կլասիօ Ռեյնճըրզ» (Սկոտլանդ) Եւրոպայի Լիկայի քառորդ եզրափակիչի առաջին խաղերը տեղի պիտի ունենան Ապրիլ 7-ին, իսկ պատասխան հանդիպումները՝ Ապրիլ 14-ին:

# «Ռեալը» Մատրիի մէջ Պարտուեցաւ «Պարսելոնայէն»՝ 0:4

Սպանիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին Մատրիի «Ռեալը» ընդունեց «Պարսելոնային» եւ պարտութիւն կրեց 0:4 արդիւնքով:

Երկու կողի հեղինակ դարձաւ ճաբոնացի յարձակող Պլեյթիմերիկ Օթամբասը: Աչքի ինկան նաեւ ուրուկուէյցի պաշտպան Ռոնալտ Արաուիլոն եւ սպանացի յարձակող Ֆերան Թորեսը:

«Ռեալ» (29 խաղ) 66 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Սեւիլիայէն» (29 խաղ): «Պարսելոնան» (28 խաղ) երրորդն է՝ 54 կէտով: Նոյնքան կէտ ունի չորրորդ տեղը գտնուող «Աթլէթիքոն» (29 խաղ):

# Սարգիս Ադամեան՝ Հանդիպման Լաւագոյն Խաղցող

Հայաստանի հաւաքականի եւ «Պրիւքէի» յարձակող Սարգիս Ադամեանը ճանաչուած է «Գենկի» դէմ Պելճիքայի առաջնութեան 32-րդ հանգրուանի հանդիպման լաւագոյն խաղցող, կը հաղորդէ «Բրիւքէի» մամուլի ծառայութիւնը:

«Բրիւքէն» առաւելութեան հասած էր 3:1 արդիւնքով: Սարգիս Ադամեան աչքի ինկած էր 74-րդ վայրկեանին՝ հաշիւը դարձնելով 3:1: Սարգիս Ադամեանը 5-րդ կողն է որ նշանակած է Պելճիքայի առաջնութեան ընթացքին: Ան մասնակցած է առաջնութեան 7 հանդիպման:

«Բրիւքէն» 66 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ եւ «Ռոյալ Եուսիոնէն» ետ է 5 կէտով: